Ծրագրեր ընտանեկան բռնություն կատարող անձանց համար

Ակնարկ առկա ծրագրերի մասին և առաջարկներ Հայաստանի համար

Կանանց Աջակցման Կենտրոն

(+374)60-525-535
wsc.armenia@gmail.com
www.womensupportcenter.org
ԹԵԺ ԳԻԾ 099-88-78-08

Անի Ջիլոզյան

Կանանց աջակցման կենտրոն

Ծրագրեր ընտանեկան բռնություն կատարող անձանց համար

Ակնարկ առկա ծրագրերի մասին և առաջարկներ Հայաստանի համար

ԵՐԵՎԱՆ
2019

Բովանդակություն

05 **Երախտիքի խոսք**

06 **Նախաբան**

09 **Բառարան**

13 **Ներածություն**

20 **Բռնարարների հետ աշխատանքների ծրագրերի համաշխարհային փորձի ակնարկ**

22 Բռնարարների հետ աշխատանքի մոդելներն ու մոտեցումները

29 Բռնարարների ծրագրերի արդյունավետության ցուցանիշները

34 Փոխվելու մոտիվացիա և պատրաստակամություն

38 Անհատական մոտեցումներ

41 Ռիսկայնության, կարիքների և արձագանքման սկզբունքները

47 Ծրագրային այլ ազդեցիկ գործոններ

57 Համակարգված համայնքային արձագանք

60 **Հայաստանում բռնարարների արդյունավետ ծրագրի մշակման առաջարկներ**

62 Դասեր լավագույն փորձից

64 Ծառայությունների մատուցման ուղենշային սկզբունքներն ու նվազագույն չափորոշիչները

65 Աշխատակազմի վերապատրաստում

67 Ուղղորդում, ներգրավում և նախնական գնահատում

70 Թերապիա և հետևողական աշխատանք

73 Մշտադիտարկում և գնահատում

76 Բռնությունից տուժածների անվտանգությունը՝ առաջնահերթություն

78 Բռնարարների հետ աշխատանքի ֆինանսավորումը

80 Գործընկերության մոտեցումները

83 Երկարաժամկետ քաղաքականության փոփոխություն

Երախտիքի խոսք

Զեկույցը մշակվել է Կանանց աջակցման կենտրոնի խնդրանքով: Հեղինակը շնորհակալություն է հայտնում կենտրոնի տնօրեն Մարո Մաթոսյանին փորձագիտական խորհրդատվության համար, ինչպես նաև Հարվարդի իրավագիտության ուսանողներ Լարա Թաունզենին և Ալիսոն Ուիթիքերին, ում ներդրումը նպաստել է զեկույցի ամբողջականացմանը:

Նախաբան

2010թ. հիմնադրվելուց ի վեր՝ Կանանց աջակցման կենտրոնը (ԿԱԿ) ընտանեկան բռնությանն առնչվող համալիր ծառայություններ է մատուցում: Կենտրոնի գործունեությունը վարում են իրավապաշտպաներ ու ծառայություններ մատուցողներ, որոնց առաքելությունն է պայքարել ընտանեկան բռնության դեմ՝ տուժածներին պաշտպանելու, վերականգնելու և զորեղացնելու միջոցով, ինչպես նաև փոխելով իրավական, կրթական ու սոցիալական այն պայմանները, որոնք նպաստում են լռության մշակույթին: Մեր սկզբունքներից է կանանց նկատմամբ բռնության հանդեպ զրո հանդուրժողականությունը, ուստի մեր քաղաքականությունն է ստեղծել միջավայր, որտեղ կանայք և աղջիկները պաշտպանված են, ապահով, շրջապատված հոգածությամբ:

ԿԱԿ-ը փոփոխությունների հասնելու նպատակով իր գործունեությունը վարում է երեք ուղղություններով՝ ծառայությունների մատուցման բարելավում, բռնության կանխարգելում և համապատասխան կառույցների կողմից արձագանքի բարելավում: Կենտրոնի աշխատակիցներն առաջնորդվում են լավագույն միջազգային փորձի վրա հիմնված մեթոդաբանությամբ՝ ընտանեկան բռնությունից տուժածներին ու նրանց երեխաներին մատուցելով 24-ժամյա թեժ գծի, խորհրդատվության, ապահով տան, մասնագիտական խորհրդատվության, իրավական աջակցության, կրթական ու շահերի պաշտպանման, սեփական փոքր բիզնեսը սկսելուն օժանդակող դասընթացների ծառայություններ: ԿԱԿ-ը համոզված է,

որ ընտանեկան բռնության դեմ պայքարի առանցքում դրա կանխարգելումն է, ուստի մենք նաև համախմբում ենք համայնքներին, որպեսզի փոխենք կանանց նկատմամբ բռնության մասին վերաբերմունքն ու իրազեկվածությունը: Ինստիտուցիոնալ մակարդակում մենք ստեղծում ենք համայնքահեն պաշտպանության ու հաշվետվողականության համակարգեր, բարձրացնում ենք առանցքային որոշումներ ընդունողների կարողությունները, աջակցում ենք բազմաոլորտային քաղաքականությունների ու գործողությունների պլանների իրականացմանը: Ներկայում ԿԱԿ-ն աշխատում է ընտանեկան բռնության մասին վերջերս ընդունված օրենքի փոփոխությունների ու լրացումների ուղղությամբ, քանի որ դրանում առկա բազմաթիվ բացերը թույլ չեն տալիս ապահովել ընտանեկան բռնության զոհերի պատշաճ պաշպտպանությունն ու բռնարարների համար չեն սահմանում համապատասխան պատիժ:

Վերջերս ընդունված օրենքն, ի թիվս այլ պահանջների, սահմանում է նաև բռնարարների հետ վերականգնողական աշխատանք: Դեռևս ժամանակ է անհրաժեշտ՝ հասկանալու, թե արդյոք Հայաստանի ներկայիս միջավայրում բռնարարների հետ աշխատանքը կօգնի կանխարգելել ու հաղթահարել ընտանեկան բռնությունը, թե ոչ: Կասկածները պայմանավորված են խնդրի բնույթով ու մասշտաբով, ոլորտում որակավորված մասնագետների պակասով, հայ հասարակության մեջ առկա այն միտումով, որ բռնարարներին չեն պատժում կամ իրենց արարքների համար պատասխանատվության ենթարկում: Այս հետազոտությունը նախաձեռնելու

նպատակն այն է, որ լույս սփռենք բռնարարների փորձնական ծրագիր գործարկելու մարտահրավերների ու բարդությունների վրա: Մենք կարծում ենք, որ բռնարարների հետ աշխատանքն ավելի մեծ հաջողություններ կարձանագրի այն ժամանակ, երբ Հայաստանում լինեն լավ զարգացած կենտրոններ, որակավորված մասնագետներ և երբ Հայաստանում փոխվի ընտանեկան բռնության նկատմամբ հանրային վերաբերմունքը: Ի վերջո, սա պահանջում է վնասաբեր գենդերային նորմերի ու կարծրատիպերի վերացում և ավելի էգալիտար հանրության կերտում: Եվ թեև այժմ մեր լուման ենք ներդնում ընտանիքում բռնարարքներ կատարող անձանց ռեաբիլիտացիայի իրագործելի ու արդյունավետ ծրագրեր ուսումնասիրելու մեջ, այդուհանդերձ շարունակում ենք նվիրված մնալ հանրությանը կրթելուն և կանանց ու երեխաների կյանքերը փրկող ծառայություններ մատուցելուն:

Մարո Մաթոսյան
Կանանց աջակցման կենտրոնի տնօրեն

Բառարան

Զայրույթի կառավարում

Զայրույթի կանխարգելման ու վերահսկման հոգեթերապևտիկ ծրագիր, որի նպատակն է զայրույթը կարգավորել այնպես, որ այն չհանգեցնի խնդիրների: Զայրույթի կառավարման տեխնիկաներից են՝ ռելաքսացիան, շնչառական վարժանքները, կոգնիտիվ վերակառուցումն ու երևակայումը, խնդիրների լուծման վարժանքները, հաղորդակցության ու միջանձնային հմտությունները բարելավող տեխնիկաները:

Կոգնիտիվ վերակառուցում

Ոչ ռացիոնալ կամ վնասաբեր մտքերը ֆիքսելու ու հակադարձելու հոգեթերապևտիկ գործընթաց: Այս տեխնիկան գործածվում է տարբեր տեսակի թերապիաներում, ներառյալ՝ կոգնիտիվ վարքաբանական թերապիայում և ներառում է մտքերի դիսցիպլինավորված վիճարկում, մտքերի արձանագրում, ուղղորդված երևակայում և այլ ռազմավարություններ:

Կոգնիտիվ վարքաբանական թերապիա

Սոցիալ-հոգեբանական միջամտություն, որը կենտրոնանում է դիսֆունկցիոնալ մտքերը, համոզմունքները, վերաբերմունքն ու վարքերը փոփոխելու վրա, ինչպես նաև հուզական կարգավորումը բարելավելու և խնդիրների հաղթահարմանն ուղղված անձնական ստրատեգիաներ զարգացնելու վրա:

Ստուգողական մատյան
Հարցերի շարք, որի նպատակն է վերլուծել բռնության կարևորագույն տարրերը և պարզել, թե ինչպես կարող են տղամարդիկ լինել առավել ոչ բռնի և ոչ վերահսկող կանանց հետ ինտիմ հարաբերություններում: Մատյանը վերաբերում է բռնարարի գործողություններին, մտադրություններին, համոզմունքներին ու զգացմունքներին, բռնությունը անտեսելու կամ նվազեցնելու, մերժելու և այլոց մեղադրելու միտումներին, սեփական անձի, զուգընկերների և այլոց վրա ազդեցությանը, նախկինում գործադրած բռնությանը և չվերահսկող վարքագծին:

Համայնքային համակարգված արձագանք
Ընտանեկան բռնությանն արձագանքելու միջկառույցային մոտեցում, որը ենթադրում է առողջապահական, իրավապահ, դատական, իրավախորհրդատու, ապաստանային և պաշտպանության ծառայությունների և կրթական հաստատությունների համակարգված ներգրավումը, որպեսզի ապահովվի ընտանեկան բռնությունից տուժածներին ու նրանց ընտանիքներին անհրաժեշտ աջակցությունը:

Զույգերի խորհրդատվություն
Թերապիայի ձև, որի միջոցով փորձ է արվում բարելավել ռոմանտիկ հարաբերություններն ու կարգավորել միջանձնային բախումները:

Դուլութի մոդել
ԱՄՆ Մինեսոտա նահանգի Դուլութ քաղաքում հիմնադրված ծրագիր, որի նպատակն է նվազեցնել

ընտանեկան բռնությունը: Սա Միացյալ Նահանգներում լայնորեն կիրառվող մոտեցում է, երբ կատարվում է միջամտություն կանանց նկատմամբ տղամարդկանց բռնարարքների ժամանակ և աշխատանք է տարվում տղամարդկանց հետ: Այն մեծ ազդեցություն է ունեցել ընտանեկան բռնության շուրջ տարվող աշխատանքների քաղաքականության վրա:

Էկոլոգիական մոդել
Ծրջանակ, որը միջանձնային բռնությունը դիտարկում է որպես անձնական, հարաբերությունների, համայնքային և հասարակական մակարդակներում տարբեր փոխազդող գործոնների արդյունք:

Գիտակցված և կենտրոնացված մեդիտացիա
(mindfulness mediation) Տեխնիկա, որի միջոցով տեղի է ունենում մտամփոփում կամ ներկա պահի ու սեփական մտքերի ու զգացմունքների գիտակցում, որպեսզի դուրս մղվեն բացասական մտքերն ու զգացմունքները՝ ապրելով ու դիտարկելով դրանք՝ առանց դրանց կողմից կլանվելու:

Մոտիվացիա բարձրացնող հարցազրուցավարում/ հարազրույց
Խորհրդատվության մոտեցում, որով փորձ է արվում ներգործել անձանց տրամադրության վրա այնպես, որ նրանք փոփոխություններ կատարեն՝ փոխարենը խորամուխ լինելու ուղղորդում չպարունակող թերապևտիկ զննման մեջ:

Հոգեդինամիկ թերապիա
Թերապևտիկ մոտեցում՝ հիմնված ֆրոյդյան հոգեվերլուծության վրա, որի ժամանակ թերապևտն

անձին օգնում է բացահայտել, վերապրել ու ըմբռնել խորը արմատներ ունեցող զգացմունքները դրանք կարգավորելու նպատակով:

Ռեցիդիվ
Անցանկալի վարքի կրկնում այն բանից հետո, երբ իրականացվել է այն դադարեցնելուն ուղղված վարժանք կամ թերապիա: Ընտանեկան բռնության ոլորտում ռեցիդիվը վերաբերում է այն բռնարարներին, ովքեր կրկին բռնարարք են կատարել իրենց զուգընկերների նկատմամբ:

Վտանգի գնահատում
Ընտանեկան բռնությունից տուժածների հետ պրակտիկ մասնագետների կողմից կիրառվող գործիք, որի նպատակն է գնահատել բռնարարների կողմից տուժածներին սպառնացող վտանգի մակարդակը: Գնահատումն ընդհանուր ռիսկերի կառավարման ռազմավարության կարևոր մաս է, որի նպատակն է վերացնել կամ նվազեցնել ռիսկայնության հետ կապված պոտենցիալ հետևանքները:

Ռիսկայնության, կարիքների և արձագանքման սկզբունքներ
Բռնարաների գնահատման ու նրանց հետ աշխատանքի մոդել, որը հաշվի է առնում նրանց ներկայացրած վտանգը, կոնկրետ կարիքներն ու նրանց հետ աշխատելու լավագույն եղանակը, որի միջոցով հնարավոր կլինի նվազեցնել վտանգն ու առավելագույնի հասցնել ցանկալի փոփոխությունը:

Ներածություն

Ընտանեկան բռնությունը (ԸԲ) ինտիմ զուգընկերոջ (կողակցի), նախկին զուգընկերոջ կամ ընտանիքի անդամի կողմից դրսևորվող հարկադրական կամ վերահսկող կրկնվող վարքն է, որը կարող է արտահայտվել տարբեր ձևերով, ներառյալ՝ ֆիզիկական ու սեռական բռնությունը, զգացմունքային կամ հոգեբանական ճնշումը, մեկուսացումը, տնտեսական բռնությունը, սպառնալիքները, ահաբեկումը, հալածումն ու հետապնդումը: Թեև կան կանայք, ովքեր ֆիզիկական բռնություն են գործադրում իրենց զուգընկերների հանդեպ, և բռնություն գոյություն ունի նաև նույնասեռ զույգերի շրջանում, ընտանեկան բռնություն իրականացնողների մեծ մասը տղամարդիկ են, իսկ զոհերը՝ կանայք: Այդ իսկ պատճառով զեկույցում կիրառվում է ընտանեկան բռնության այս առավել նեղ սահմանումը, որով ինտիմ զուգընկերների միջև բռնությունը նշանակում է տղամարդու կողմից կնոջ նկատմամբ բռնության գործադրում:

Համաձայն 2015-2016 թթ. Հայաստանի ողջ տարածքում անցկացված հետազոտության՝ կանանց 22.4%-ը նշել է, որ ենթարկվել է ֆիզիկական բռնության, իսկ 45.9%-ը՝ հոգեբանական բռնության:[1] Այս սահմռկեցուցիչ խնդիրը լուծելուն միտված երկար տարիների հասարակական պայքարի արդյունքում Ազգային ժողովը 2017թ. դեկտեմբերին վերջապես ընդունեց ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրենքը: 2018թ. երկրորդ կեսին, երբ օրենքն արդեն ուժի մեջ էր, ՀՀ ոստիկանության տվյալներով գրանցված էր ընտանեկան բռնության 990 դեպք, որից 379-ն ուղարկվել էր դատաքննության: Համեմատության համար նշենք, որ նույն տարվա առաջին կեսի համար

1 Վլադիմիր Օսիպով, Ջինա Սարգիզովա, «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների զեկույց, 2016 թ», https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN%20AND%20GENDER%20EQUALITY_Final_0.pdf:

ՀՀ ոստիկանությունում արձանագրվել էր ԸԲ ավելի քիչ՝ 285 դեպք:[2] Նույն տարում միայն Կանանց աջակցման կենտրոնում ծառայություններ է ստացել 358 նոր շահառու, ապաստան է ստացել 63 կին և երեխա: Այս բռնարարքների մեծ մասի դեպքում բռնարարները կանանց ամուսինները կամ զուգընկերներն էին:

Արձանագրված ցուցանիշների բարձրացումը վկայում է ընտանեկան բռնության խնդրի ընկալման մեջ հասարակական փոփոխության մասին և ցույց է տալիս, թե որքան կարևոր է այդ խնդրի դեմ պայքարին ու կանխարգելմանն ուղղված օրենքի առկայությունը: Այդուհանդերձ, կարևոր է մտապահել, որ ահազանգի հիման վրա արձանագրված ընտանեկան բռնության վիճակագրությունը դեպքերի ընդամենը փոքր մասն է. իրականում Հայաստանում ընտանեկան բռնության իրական ցուցանիշները հայտնի չեն, դրանց հնարավոր է միայն գնահատողական թիվ վերագրել, քանի որ դեպքերի մասին ահազանգումը ցածր մակարդակի վրա է:

Թեև ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունումը դրական քայլ է, հիմնախնդիրը լուծելու ինստիտուցիոնալ կարողությունների պակասը շարունակում է խոչընդոտել, որպեսզի կանայք ու երեխաները պաշտպանություն ստանան: Նրանց կյանքն ու առողջությունը կշարունակեն վտանգված մնալ այնքան ժամանակ, մինչև կառավարությունը համալիր փոփոխություններ չանի բռնության ահազանգերին իր տրամադրած արձագանքման մոտեցումներում և բռնությունից տուժածներին չտրամադրի հասանելի ու որակյալ ծառայություններ: Որպես Կանանց

2 Վիճակագրական տվյալները վերցված են ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած գրությունից:

նկատմամբ բռնության ու ընտանեկան բռնության դեմ պայքարի ու դրանց կանխարգելման Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (հայտնի է իբրև՝ Ստամբուլի կոնվենցիա) անդամ պետություն, Հայաստանի կառավարությունը պետք է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկի, որպեսզի ստեղծվեն ծրագրեր, որոնք կկանխեն բռնարարների կողմից կրկնահանցագործությունը և կիրականացնեն այդ միջոցառումները տուժածներին մասնագիտացված աջակցություն տրամադրող ծառայությունների հետ սերտ համագործակցության պայմաններում, ինչպես սահմանված է Կոնվենցիայի 16-րդ հոդվածում:[3]

Ողջ աշխարհում ընտանեկան բռնության դեպքերի միջամտությունները գրեթե ամբողջությամբ, սակայն ոչ բացառապես կենտրոնացած են տուժողների վրա՝ օգնելով նրանց ստանալ իրավաբանական, բժշկական ու հոգեբանական աջակցություն, զորեղացնելով նրանց, որպեսզի կարողանան դուրս գալ բռնարար հարաբերություններից: Սակայն գնալով մեծանում է համաձայնությունը, որ կարևոր է նաև աշխատանքներ տանել բռնարարների հետ, եթե ցանկանում ենք վերացնել ընտանեկան բռնությունը:
Գիտակցելով, որ բռնարարների հետ աշխատանքն ընտանեկան բռնությունը նվազեցնելուն ուղղված համայնքային արձագանքի անբաժան մաս է, ավելի շատ կանանց կազմակերպություններ ու մասնագետներ են փորձում տուժածներին աջակցելու և պաշտպանելու իրենց առաքելության հետ համատեղել բռնարարների

3 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց. Ընտանեկան բռնարարների հետ աշխատանքի չափորոշիչներ մշակելու ուղեցույց, 2017, https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Resources_Activities/guidelines/5_2_2____Guidelines_for_Standards_2017.pdf

հետ աշխատանքը, որպեսզի փոփոխվի վերջիններիս վարքն ու վերաբերմունքը, ինչպես նաև բարեփոխվի քրեական արդարադատության համակարգն այնպես, որ բռնարարներն իսկապես պատասխանատվության ենթարկվեն:

Սույն փաստաթղթի նպատակն է ճանապարհային քարտեզ առաջարկել Հայաստանում ընտանեկան բռնություն կատարող անձանց ծառայությունների մատուցմամբ հետաքրքրված և դրանք պաշտպանող հասարակական և պետական կազմակերպություններին, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերին, որոնք աշխատում են բռնարարների հետ, որպեսզի կանխեն և պայքարեն ընտանեկան բռնության դեմ: Զեկույցը հիմնված է գրականության ուսումնասիրության և հեղինակի՝ հայաստանյան համատեքստում աշխատելու ընթացքում ձեռքբերված գիտելիքների վրա: Զեկույցը բաղկացած է երկու գլխավոր բաժիններից՝ առաջինն ուսումնասիրում է բռնարարների հետ աշխատանքում գոյություն ունեցող ծրագրերի ուղեցույցները, սկզբունքները, մոդելներն ու ընդհանուր բնութագրիչները, ինչպես նաև տարբեր մոտեցումների արդյունավետությունը:
Այստեղ նկարագրվում են ընտանեկան բռնություն կատարող անձանց համար ստեղծված ծրագրերն ու լավագույն փորձը՝ կենտրոնանալով Միացյալ Նահանգներում և Եվրոպայում առկա փորձի վրա, որտեղ բռնարարների հետ աշխատանքի ծրագրեր իրականացվում են տասնամյակներ շարունակ, և առկա են դրանց արդյունավետության գնահատման վստահելի տվյալներ: Զեկույցի երկրորդ բաժինը նվիրված է Հայաստանում բռնարար տղամարդկանց

հետ աշխատելու փորձնական ծրագիր իրականացնելու հարցում շահագրգիռ կազմակերպություններին ընդհանուր առաջարկներ տալուն և այնպիսի քայլեր մատնանշելուն, որոնցով հնարավոր կլինի ծրագիրը հաջողությամբ իրականացնել:

Բռնարարների հետ աշխատանքների ծրագրերի համաշխարհային փորձի ակնարկ

Զեկույցի այս բաժնում ամփոփ ներկայացված են բռնարարների հետ աշխատանքի ուղենշային տեսական կետերն ու բնութագրիչները: Նման ծրագրերն ընդունված է անվանել ծեծողների միջամտության ծրագրեր կամ պարզապես՝ բռնարարների ծրագրեր: Ներկայացված է նաև Հյուսիսային Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում իրականացվող հիմնական ծրագրերի նկարագրություն: Քանի որ բռնարարների ծրագրերն այս համատեքստում իրականացվում են շատ ավելի վաղ ժամանակից, քան աշխարհի այլ շրջաններում, դրանց որակի գնահատումներն ավելի շուտ հասանելի են հենց Հյուսիսային Ամերիկայից ու Արևմտյան Եվրոպայից:

Բռնարարների ծրագրերը մեծապես տարբերվում են իրարից իրենց ձևաչափերով, տևողությամբ, մոտեցմամբ ու համագործակցության շրջանակով: Զեկույցում ուսումնասիրվել են դրանց մեթոդաբանություններն ու ընթացակարգերը, ծրագրերի տևողությունը, դրանց չափման ու գնահատման ռազմավարությունները, ծրագրի ավարտից հետո ստուգումը, գլխավոր գործընկեր կառույցները: Զեկույցն ուսումնասիրում է այդ ծրագրերի արդյունավետության գնահատումների հիման վրա եզրահանգումներ պարունակող էմպիրիկ հետազոտություններ: Զեկույցի այս բաժնի նպատակն է ավելի լավ ըմբռնել այս ծրագրերի հայեցակետերը, որպեսզի առաջարկվեն այնպիսի միջամտության ռազմավարություններ, որոնք կիրառելի կլինեն հայաստանյան համատեքստում:

Բռնարարների հետ աշխատանքի մոդելներն ու մոտեցումները

Չնայած մեթոդաբանությունների ու մոտեցումների տարբերությանը՝ բռնարարների ծրագրերն ընդհանուր առմամբ ուղղված են բռնության պատճառների, դինամիկայի ու հետևանքների մասին տղամարդկանց կրթելուն, սովորեցնելուն ճանաչել ու վերահսկել զայրույթն առանց դիմելու բռնության, իջեցնելուն պոռթկման հասնելու նրանց զգայունակությունը ռելաքսացիայի ու ինքնատիրապետման տեխնիկաների միջոցով, սովորեցնելուն նրանց «թայմ-աութի» (այսինքն, դադար առնելու) տեխնիկաներ, որպեսզի խուսափեն պոռթկման բերող իրավիճակներից և ռացիոնալ կերպով լուծեն խնդիրները, փոխելուն նրանց հայացքներն ու վերաբերմունքն ինտիմ հարաբերությունների, ներառյալ՝ սեքսիստական վերաբերմունքի մասին, որոնց նրանք ապավինել են իրենց բռնարար վարքագիծն արդարացնելու համար, սովորեցնելուն նրանց կոնֆլիկտների լուծման համապատասխան հմտություններ:[4]

Մինչ օրս չկա բռնարարների ծրագրի մեկ մոդել, որն էմպիրիկ մակարդակում լիարժեքորեն հավանության ու կիրառության արժանացած լինի, ինչի պատճառով

4 Էթիոնի Ալդարոնդո, Ծեծողների միջամտության ծրագրերի գնահատումն ըստ համատեքստի, 2009թ. (Etiony Aldarondo, Assessing the Efficacy of Batterer Intervention Programs in Context, 2009), https://www.futureswithoutviolence.org/userfiles/file/Children_and_Families/Assessing%20the%20Efficacy%20of%20Batterer%20Intervention%20Programs%20in%20Context.pdf.

նման ծրագրերի պաշտպանները ընտանեկան բռնության դեմ պայքարում կիրառում են տարբեր մոտեցումներ: Առավել տարածված է երկու մոդել. Առաջինը՝ ֆեմինիստական միջամտություններ են, ինչպիսին է Դուլութի մոդելը, երկրորդը՝ միջամտություններ են, որոնց բնորոշ է կոգնիտիվ վարքաբանական թերապիան: Այս երկու մոդելների և հավելյալ խոստումնալից մոտեցումների մասին ավելի մանրամաս ներկայացված է ստորև:

1970-ականներին Միացյալ Նահանգներում կանանց իրավունքների պաշտպանները սկսեցին շարժում, որով բարձրացնում էին ընտանեկան բռնության լրջության ու քրեական բնույթի մասին իրազեկվածությունը, ինչի արդյունքում ստեղծվեցին բռնարար տղամարդկանց գիտակցությունը բարձրացնող կամավոր խմբեր, ավելի մեծացավ քաղաքական ճնշումը, որպեսզի ընտանեկան բռնության դեպքում ավելի խիստ օրենքներ ու պատժամիջոցներ կիրառվեն և ավելի շատացան համագործակցության գործողությունները քրեական արդարադատության մարմինների հետ՝ մշակելու բռնարարների ծրագրեր:[5] Առավել վաղ միջամտությունները հանգեցրին ԱՄՆ-ում լայն տարածում գտած ծրագրի՝ Դուլութի մոդելին՝ Մինեսոտա նահանգի Դուլութ քաղաքի անվամբ, որտեղ այն մշակվել է:

Դուլութի մոդելն առաջնորդվում է կրթահոգեբանական մոտեցմամբ: Հիմնված լինելով ֆեմինիստական

5 Աարոն Ս, Բոլորիեր Ռ, Ծեծողների միջամտության ծրագրերի վրա նոր շեշտադրում անելու անհրաժեշտությունը, 2017թ, «Տրավմա Բռնություն Չարաշահում» 18(4):425-432 (Aaron S, Bealaurier R. The Need for New Emphasis on Batterers Intervention Programs. 2017. Trauma Violence Abuse. 18(4):425-432)

սկզբունքների վրա՝ այն ընտանեկան բռնությունը դիտարկում է որպես արական սեռի արտոնության ու հայրիշխանական վերաբերմունքի ու համոզմունքների հետևանք, ուստի այն նախագծված է այնպես, որ նպաստի բռնարար տղամարդկանց մոտ էգալիտար մտածողության ամրապնդմանը:[6] Դուլութի մոդելում կիրառվում են գործիքներ (օրինակ՝ «Ուժի/իշխանության և վերահսկողության անիվը»[7] և «Հավասարության անիվը»[8]), որոնց շնորհիվ հնարավոր է լինում զատորոշել այն հարաբերությունները, որտեղ բռնության պատճառը գալիս է արական սեռի արտոնությունից ու տիրապետումից: Գործիքները նաև նպաստում են մի շարք այլ անհատական ռազմավարությունների մշակմանը, օրինակ՝ լարվածության նվազեցման վարժանքներ անցկացնելուն, հաղորդակցության, խնդիրներ լուծելու, «թայմ-աութի» հմտություններ սովորելուն և բռնության զոհերին ապրումակցելուն:[9] Դուլութի մոդելի կողմնակիցները համարում են, որ ընտանեկան բռնությունը հոգեկան խանգարման, ալկոլոհլի կամ հոգեմետ նյութերի չարաշահման, զայրույթի, սթրեսի կամ դիսֆունկցիոնալ հարաբերությունների արդյունք չէ:[10] Այդ իսկ պատճառով նրանք չեն տարբերակում բռնարարների անհատականության տեսակներ ու անցյալում տեղի

6 Արիաս Է, Արս Ռ, Վիլարինյո Մ, «Ծեծողների միջամտության ծրագրեր. արդյունավետության մետա-վերլուծական ակնարկ», 2013թ, Սոցիալ-հոգեբանական միջամտություն, 22(2):153-160 (Arias E, Arce R, Vilariño M. Batterer intervention programmes: A meta-analytic review of effectiveness. 2013. Psychosocial Intervention. 22(2):153-160)

7 Տե՛ս https://www.theduluthmodel.org/wp-content/uploads/2017/03/PowerandControl.pdf

8 Տե՛ս https://www.theduluthmodel.org/wp-content/uploads/2017/03/Equality.pdf

9 Հերման Կ, Ռոտունդա Ռ, Վիլիամսոն Գ, «Դուլութի մոդելով ծեծողների միջամտության ծրագրի արդյունքները դրանց ավարտին և երկար ժամանակ անց», 2014թ. Բռնարարների ռեաբիլիտացիայի ամսագիր, 53(1):1-18, (Herman K, Rotunda R, Williamson G. Outcomes From a Duluth Model Batterer Intervention Program at Completion and Long Term Follow-Up. 2014. Journal of Offender Rehabilitation. 53(1):1-18)

10 Հանրային քաղաքականության Վաշինգտոնի նահանգի ինստիտուտ, «Ի՞նչն է արդյունավետ ընտանեկան բռնություն կատարողների ռեցիդիվը նվազեցնելու հարցում», 2013թ.(Washington State Institute for Public Policy, What works to reduce recidivism by domestic violence offenders?, 2013), https://www.wsipp.wa.gov/ReportFile/1119/Wsipp_What-Works-to-Reduce-Recidivism-by-Domestic-Violence-Offenders_Full-Report.pdf

ունեցած իրադարձությունները, որոնք կարող էին նպաստել բռնությանը:[11] Դուլութի մոդելը հիմնված է հետևյալ 8 թեմաների վրա, որոնցից յուրաքանչյուրը, որպես կանոն, քննարկվում է երեք շաբաթվա ընթացքում. «բանակցություն և արդարություն, սպառնալիքից զերծ վարքագիծ, հարգանք, վստահություն և աջակցություն, անկեղծություն և պատասխանատվություն, պատասխանատու ծնողավարում, պարտականությունների բաժանում և տնտեսական համագործակցություն»:[12] Խմբային ու տնային վարժանքների թվում են՝ ծանոթության (ներկայանալու) վարժանքները, նպատակների վերհանումը, ստուգողական մատյանի քննարկումը, դերախաղերը:[13]

Ի տարբերություն Դուլութի մոդելի, կոգնիտիվ վարքաբանական թերապիայի (ԿՎԹ) վրա հիմնված ծրագրերը բռնությունը դիտարկում են որպես ինչ-որ տեղից սովորած վարքագիծ, որը պետք է շտկել ոչ բռնի այլընտրանքների միջոցով՝ զարգացնելով սոցիալական հմտություններ և կառավարելով զայրույթը:[14] Այս մոտեցումը խրախուսում է բռնարարին վեր հանել և գիտակցել իր վարքագիծը, ընդունել պատասխանատվությունը, բացահայտել այլընտանքային վարքեր, վերակառուցել մտքերը, համոզմունքներն ու վերաբերմունքը:[15]

---

11 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քեննոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ», 2016թ., Բռնություն զուգընկերոջ կողմից, 7(4):355-460 (Babcock J, Armenti N, Cannon C, Lauve-Moon K, Buttell F, Ferreira R, Cantos A, Hamel J, Kelly D, Jordan C, et al. Domestic Violence Perpetrator Programs: A Proposal for Evidence-Based Standards in the United States. 2016. Partner Abuse. 7(4):355-460)

12 Փենս Է, Փայմար Մ, 1993, Ծեծող տղամարդկանց կրթելու խմբեր. Դուլութի մոդելը, Նյու Յորք, Սփրինգլեր հրատարակություն, (Pence E, Paymar M. 1993. Education Groups for Men Who Batter: The Duluth Model. New York, NY, US: Springer Publishing Co.)

13 Նույնը

14 Արիաս Է, Արս Ռ, Վիլարինյո Մ, «Ծեծողների միջամտության ծրագրեր. արդյունավետության մետա-վերլուծական ակնարկ», 2013թ, Սոցիալ-հոգեբանական միջամտություն, 22(2):153-160 (Arias E, Arce R, Vilariño M. Batterer intervention programmes: A meta-analytic review of effectiveness. 2013. Psychosocial Intervention. 22(2):153-160)

15 Աարոն Ս, Բոլորիեր Ռ, «Ծեծողների միջամտության ծրագրերի վրա նոր շեշտադրում անելու անհրաժեշտությունը», 2017թ, Տրավմա Բռնություն Չարաշահում 18(4):425-432 (Aaron S, Bealaurier R. The Need for New Emphasis on Batterers Intervention Programs. 2017. Trauma Violence Abuse. 18(4):425-432)

Մեծ շեշտադրում է արվում կանանց ապրումակցելու, նրանց հետ հաղորդակցվելու ու հարաբերվելու վրա:[16] Ընտանեկան բռնությունը նվազեցնելուն միտված կոգնիտիվ վարքաբանական միջամտությունները հիմնված են այն կանխադրույթի վրա, որ բռնության դիմող անձինք ունեն իրենց անձի, իրենց զուգընկերների և կոնֆլիկտների ժամանակ բռնության դիմելու վերաբերյալ խեղված մտածելակերպ:[17] Այս ոլորտում արված հետազոտությունները ցույց են տալիս, որ զայրույթի հետ կապված խնդիրների կեսը կարող է ուղիղ կապ ունենալ ընտանեկան բռնության հետ, ուստի դրանք պետք է հաշվի առնվեն բռնարարների համար ծրագրեր մշակելիս:[18] ԿՎԹ տարբեր մոտեցումներ օգտակար են եղել այն բռնարարների համար, ովքեր ունեն զայրույթի հետ կապված խնդիր. նրանք կարողացել են սովորել հաղորդակցության, հաստատակամության արտահայտման և սոցիալական հմտություններ՝ ձեռնպահ մնալով սթրեսորներին ռեակցիա տալուց:[19]
Ինչպես Դուլութի մոդելն, այնպես էլ ԿՎԹ-ն իրենց առանցքում պահպանում են բռնության զոհի անվտանգության ու բռնարարի պատասխանատվության սկզբունքները: Այսպիսով, այս երկու գլխավոր մոդելները (Դուլութինը և ԿՎԹ-ն) իբրև անհամատեղելի

16 Հանրային քաղաքականության Վաշինգտոնի նահանգի ինստիտուտ, «Ի՞նչն է արդյունավետ ընտանեկան բռնություն կատարողների ռեցիդիվը նվազեցնելու հարցում», 2013թ.(Washington State Institute for Public Policy, What works to reduce recidivism by domestic violence offenders?, 2013), https://www.wsipp.wa.gov/ReportFile/1119/Wsipp_What-Works-to-Reduce-Recidivism-by-Domestic-Violence-Offenders_Full-Report.pdf.
17 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քենոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ», 2016թ., Բռնություն զուգընկերոջ կողմից, 7(4):355-460 (Babcock J, Armenti N, Cannon C, Lauve-Moon K, Buttell F, Ferreira R, Cantos A, Hamel J, Kelly D, Jordan C, et al. Domestic Violence Perpetrator Programs: A Proposal for Evidence-Based Standards in the United States. 2016. Partner Abuse. 7(4):355-460)
18 Մորֆի Ս, Թաֆթ Ց, Էքհարդ Ս, «Բռնի տղամարդ զուգընկերների զայրույցի հիմնախնդրի նկարագրերը. Կլինիկական ներկայացման ու բուժման արդյունքի տարբերությունները», 2007թ., Խորհրդատվական հոգեբանության ամսագիր, 54:189–200 (Murphy C, Taft C, Eckhardt C. Anger problem profiles among partner violent men: Differences in clinical presentation and treatment outcome. 2007. Journal of Counseling Psychology, 54:189–20)
19 Բաբքոք Ջ, Գրին Ս, Ռոբի Ս, «Ծեծողների ծրագրերն արդյո՞ք արդյունավետ են: Ընտանեկան բռնության թերապիայի մետավերլուծական ուսումնասիրություն», 2004թ., Կլինիկական հոգեբանության ակնարկ, 23:1023-1053. (Babcock J, Green C, Robie C. Does batterer's treatment work? A meta-analytic review of domestic violence treatment. 2004. Clinical Psychology Review, 23:1023-1053)

դիտարկելու փոխարեն, շատերն իրականում համատեղել են ֆեմինիստական սկզբունքները կոգնիտիվ վարքաբանական մոտեցումների հետ և ստեղծել են այնպիսի մոդելներ, որոնք գործի մեջ և տվյալ համատեքստում ապացուցել են իրենց արդյունավետությունը: Եվրոպական 19 երկրում իրականացված բռնարարների 54 ծրագրերի մի ուսումնասիրություն պարզել է, օրինակ, որ ծրագրերի մեծ մասը կիրառել է կոգնիտիվ վարքաբանական և հոգեդինամիկ թերապիաներ, ինչպես նաև ֆեմինիստական սկզբունքներ, իսկ դրանց գրեթե կեսը կիրառել է տարբեր թերապևտիկ մոտեցումների համադրումներ:[20]

Վերջին տարիներին իրականացվող միջամտությունները, որոնք մեծամասամբ գենդերային հիմքով չեն, ոչ էլ՝ կոգնիտիվ վարքաբանական են, խոստումնալից են, սակայն խորը գնահատման դեռևս չեն ենթարկվել, որի պատճառով դժվար է դրանց կապակցությամբ եզրակացությունների հանգելը: Այդպիսի միջամտություններն անդրադառնում են հոգեպաթոլոգիային, եթե այդպիսիք առկա են, և գիտակցված մեդիտացիայի (mindfulness meditation) մոտեցումներին, որոնց կիզակետում բռնարարների միտք-մարմին վիճակն է: Այս մոտեցումները խրախուսում են լինել ավելի զգոն և կարողանալ վերահսկել դեպի հոգեբանական և ֆիզիկական պոռթկում հասցնող վիճակը, ինչն ի վերջո ագրեսիվ վարքագծի է հանգեցնում:[21]

20 Համիլթոն և այլք, «Ընտանեկան բռնարարք կատարած անձանց ծրագրերը Եվրոպայում, Մաս 1, Առկա պրակտիկայի հետազոտություն», 2013թ. (Hamilton L, Koehler J, Lösel F. Domestic Violence Perpetrator Programs in Europe, Part I: A survey of Current Practice. 2013. Int J Offender There Comp Criminol. 57(10):1189-205)
21 Հանրային քաղաքականության Վաշինգտոնի նահանգի ինստիտուտ, «Ի՞նչն է արդյունավետ ընտանեկան բռնություն կատարողների ռեցիդիվը նվազեցնելու հարցում», 2013թ.(Washington State Institute for Public Policy, What works to reduce recidivism by domestic violence offenders?, 2013), https://www.wsipp.wa.gov/ReportFile/1119/Wsipp_What-Works-to-Reduce-Recidivism-by-Domestic-Violence-Offenders_Full-Report.pdf

Կիրառվող այլ թերապևտիկ մոտեցումները կենտրոնանում են մտքի գործընթացների կամ տղամարդու բռնարարքի էմոցիոնալ կողմի վրա նույնպես:[22]

Զույգերի խորհրդատվության ու զայրույթի կառավարման մոտեցումների վերաբերյալ հակասական կարծիքներ կան. որոշ իրավապաշտպաններ համարում են, որ այդ մոտեցումները տղամարդկանց՝ իրենց բռնարարքի համար պատասխանատվության չեն ենթարկում և կանանց ավելի մեծ վտանգի են ենթարկում,[23] մյուս կողմից՝ կան հետազոտություններ, որոնք հուշում են, որ այս մոտեցումները երբեմն կարող են օգտակար լինել՝ կախված համատեքստից:[24] Կան, օրինակ, համոզիչ ապացույցներ իրենցից ցածր և միջին վտանգ ներկայացնող բռնարարների հետ զույգերի թերապիայի արդյունավետության մասին[25] (ռիսկայնության տարբեր մակարդակների մասին մանրամասն ներկայացված է «Ռիսկայնության, կարիքների և արձագանքման սկզբունքներ» բաժնում):

22 Նույնը:

23 Ռութ Ֆ, «Ընտանեկան բռնություն կիրառող անձանց ծրագրերի Բրիտանիայում», 2015թ. (Ruth Phillips, British Domestic Violence Perpetrator Programmes: 'Programme integrity' within 'service integrity', 2015) http://repository.londonmet.ac.uk/940/1/PhillipsRuth_BritishDomesticViolencePerpetratorProgrammes.pdf.

24 Էդվարդ Գ., 2012թ. «Ծեծողների ծրագրերի ապագան. վերագնահատելով ապացույցների վրա հիմնված պրակտիկան», Լիբանան, Յուսիսարևելյան համալսարանի հրատարակություն (Edward Gondolf. 2012. The Future of Batterer Programs: Reassessing evidence-based practice. Lebanon, NH: Northeastern University Press)

25 Էքհարդտ Ս. և այլք «Ինտիմ զուգընկերների հանդեպ բռնարարք կատարող անձանց և դրանց զոհերի համար միջամտության ծրագրերի արդյունավետությունը», 2013թ., Բռնություն զուգընկերոջ կողմից 4(2):196-231 (Eckhardt C, Murphy C, Whitaker D, Sprunger J, Dykstra R, Woodard K. The Effectiveness of Intervention Programs for Perpetrators and Victims of Intimate Partner Violence. 2013. Partner Abuse. 4(2):196-231)

Բռնարարների ծրագրերի արդյունավետության ցուցանիշները

Բռնարարների բոլոր ծրագրերի հիմնական նպատակը ընտանեկան բռնության ռեցիդիվի նվազեցումն է: Այդուհանդերձ, ընդհանրական հետազոտությունները ցույց են տալիս, որ նման ծրագրերը ոչ մեծ արդյունավետություն ունեն: Ինչ վերաբերում է ընտանեկան բռնության նվազեցմանը, գնահատումները բերել են տարբեր արդյունքների, մինչդեռ շատ ծրագրեր ռեցիդիվի վրա որևէ ազդեցություն չեն ունեցել կամ այն շատ չնչին է եղել: Ավելի քան 40 ծրագրերի հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ բռնարարների գրեթե 50 տոկոսը 4 տարի հետևելու ժամկետից հետո կրկին բռնություն է կիրառել իր զուգընկերոջ կամ ընտանիքի անդամի նկատմամբ:[26] Բռնարարների ծրագրերի մինչ օրս անցկացված մետավերլուծություններից ամենամեծի համաձայն՝ արձանագրվել է փոքր, սակայն նշանակալի դրական ազդեցություն, երբ ԱՄՆ 4 քաղաքներում բռնարարների ծրագրերի մասնակցող 840 տղամարդկանց և նրանց (նախկին) զուգընկերների հետ 4 տարի անցկացված աշխատանքի արդյունքում բռնարարների 5 տոկոսի մոտ բռնությունը նվազել է:[27]

26 Գոնդոլֆ Է., «Ծեծողների խորհրդատվության ծրագրերի գնահատում. դժվարին առաջադրանք, որը ցույց է տալիս որոշ արդյունքներ ու ազդեցություն», 2004թ., Ագրեսիա և բռնի վարք, 9:605-631 (Gondolf E. Evaluating batterer counseling programs: A difficult task showing some effects and implications. 2004. Aggression and Violent Behavior. 9:605-631)

27 Բաբքոք Ջ, Գրին Ս, Ռոբի Ս, «Ծեծողների ծրագրերն արդյո՞ք արդյունավետ են: Ընտանեկան բռնության թերապիայի մետավերլուծական ուսումնասիրություն», 2004թ., Կլինիկական հոգեբանության ակնարկ, 23:1023-1053. (Babcock J, Green C, Robie C. Does batterer's treatment work? A meta-analytic review of domestic violence treatment. 2004. Clinical Psychology Review, 23:1023-1053)

Կան տվյալներ, որ ԿՎԹ մոդելի վրա հիմնված ծրագրերն ընդհանուր առմամբ փոքր-ինչ ավելի արդյունավետ են, քան նրանք, որոնք հիմնված են ֆեմինիստական/ուժի և վերահսկման մոդելների վրա, ինչպիսին Դուլութի մոդելն է:[28] 1975-2013թթ. անցկացված բռնարարների 19 ծրագրերի մետավերլուծությունը, որն ուսումնասիրել է 19,000 բռնարարի, պարզել է, որ պաշտոնական զեկույցների համաձայն արձանագրվել է Դուլութի մոդելի 38 տոկոսանոց արդյունավետություն և ԿՎԹ մոդելի 42 տոկոսանոց արդյունավետություն:[29] Հետազոտողները համարում են, որ Դուլութի մոդելի ցածր արդյունավետության պատճառն այն է, որ այն անտեսում է ագրեսիայի գործադրման համատեքստը (օրինակ՝ եթե այն հոգեմետ նյութերի/ալիոկոլի ազդեցության ներքո է գործադրվել կամ փոխադարձ ագրեսիայի կրկնվող դրսևորում է), ինչպես նաև անտեսում է թերապիայի կարիքի գործոնները (օրինակ՝ էմոցիոնալ ապակարգավորումը, հարաբերությունների դինամիկան, այլ սոցիալական, անհատական զարգացման, կենսաբանական ազդեցությունները), որոնք նպաստում են ընտանեկան բռնության դրսևորմանը:[30] Քննադատվում է նաև մոդելի առճակատային բնույթը, որի պատճառով ծրագրին ենթարկվելու և այն ավարտին հասցնելու ցուցանիշները

28 Հանրային քաղաքականության Վաշինգտոնի նահանգի ինստիտուտ, «Ի՞նչն է արդյունավետ ընտանեկան բռնություն կատարողների ռեցիդիվը նվազեցնելու հարցում», 2013թ.(Washington State Institute for Public Policy, What works to reduce recidivism by domestic violence offenders?, 2013), https://www.wsipp.wa.gov/ReportFile/1119/Wsipp_What-Works-to-Reduce-Recidivism-by-Domestic-Violence-Offenders_Full-Report.pdf

29 Արիաս Է, Արս Ռ, Վիլարինյո Մ, «Ծեծողների միջամտության ծրագրեր. արդյունավետության մետա-վերլուծական ակնարկ», 2013թ, Սոցիալ-հոգեբանական միջամտություն, 22(2):153-160 (Arias E, Arce R, Vilariño M. Batterer intervention programmes: A meta-analytic review of effectiveness. 2013. Psychosocial Intervention. 22(2):153-160)

30 Բեյթս Է և այլք, ՄԹ-ում ընտանեկան բռնություն կիրառող անձանց ծրագրերի ուսումնասիրություն, Bates E, Graham-Kevan N, Bolam L, Thornton թ., Բռնություն զուգընկերների միջև 8(1):3-46 (A. A review of domestic violence perpetrator programs in the United Kingdom. 2017. Partner Abuse. 8(1):3-46)

նվազում են, քննադատվում է նաև դրա համընդհանուր և ոչ անհատական հատկանիշների հիման վրա մշակված լինելը:[31]

Չնայած ծրագրի արդյունավետությունը և ընտանեկան բռնության դադարեցումը ցույց տվող էմպիրիկ հետազոտությունների պակասին՝ Միացյալ Նահանգներում առաջատար մոտեցումներից է շարունակում մնալ Դուլութի մոդելը: Հանրային գրեթե ողջ ֆինանսավորումն ուղղվում է ուժի ու վերահսկման ծրագրերին, մինչդեռ հարաբերություններում ագրեսիային, անհատական խնդիրներին, հարաբերությունների դինամիկային անդրադարձող այլ մոտեցումները շարունակում են պակաս ուշադրություն գրավել:[32] Ի տարբերություն Միացյալ Նահանգների՝ Եվրոպայում ուսումնասիրված ծրագրերի մեծ մասը կիրառում է կոգնիտիվ վարքային սկզբունքները: Շատերը պնդում են, որ այս տարբերությունը պայմանավորված է նրանով, որ ԱՄՆ-ում հանրային քաղաքականությունը հիմնված է քաղաքական մոտիվացիաներ ունեցող ակտիվիստների, այլ ոչ՝ գիտնականների, հոգեբանների և այլ մասնագետների մոտեցումների վրա:[33] Գիտնականները խրախուսել են էմպիրիկ հիմքեր ունեցող ուղեցույցներով առաջնորդվող ծառայություններ մատուցողներին բաց

31 URBIS, Ընտանեկան բռնություն կիրառող անձանց մասին գրականության ուսումնասիրություն, 2013թ. (Literature Review on Domestic Violence Perpetrators, 2013), https://www.dss.gov.au/sites/default/files/documents/09_2013/literature_review_on_domestic_violence_perpetrators.pdf

32 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քեննոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ», 2016թ., Բռնություն զուգընկերոջ կողմից, 7(4):355-460 (Babcock J, Armenti N, Cannon C, Lauve-Moon K, Buttell F, Ferreira R, Cantos A, Hamel J, Kelly D, Jordan C, et al. Domestic Violence Perpetrator Programs: A Proposal for Evidence-Based Standards in the United States. 2016. Partner Abuse. 7(4):355-460)

33 Դաթոն Դ, Կորվո Ք., «Ինչպես վերափոխել թերի քաղաքականությունը, կանչ վերակենդանացնելու հոգեբանությունն ու գիտությունն ընտանեկան բռնության հետազոտություններում և պրակտիկաներում», 2006թ., Ագրեսիա և բռնի վարք, 11:457-483 (Dutton D, Corvo K. Transforming a Flawed Policy: A Call to Revive Psychology and Science in Domestic Violence Research and Practice. 2006. Aggression and Violent Behavior. 11:457-483)

լինել ԿՎԹ հիմքով ծրագրեր մշակելու առջև՝ անկախ նրանից, թե դա որքանով է համընկնում որոշակի գաղափարախոսության հետ:[34]

Հատկանշական է, որ ծրագրերի՝ բռնության նվազեցման խիստ չափավոր արդյունավետության փաստը միանշանակորեն չի նշանակում, որ դրանք արժանի չեն իրականացվելու: Բռնարարների ծրագրերի «ոսկյա չափանիշ» գոյություն չունի, մեծամասամբ այն պատճառով, որ եղած փորձարարական գնահատումների վրա ազդում են մեթոդաբանական, կոնցեպտուալ և իրագործելիության հետ կապված խնդիրները (օրինակ՝ պատահական ընտրանքով վերահսկվող հետազոտություն իրականացնելու խնդիրը, ծրագրերից դուրս գալու բարձր մակարդակը՝ դրան վատ ենթարկվելու կամ սեփական կամքով դրանից հրաժարվելու պատճառով, ծրագրի ավարտից հետո ստուգողական աշխատանքների ցածր մակարդակը կամ կողմնակալությունը և այլ խնդիրներ): Խնդիր է նաև այն, որ առավել նոր թերապևտիկ մոտեցումներով ծրագրերի գնահատումները քիչ են ու դրանց արդյունավետության մասին համապարփակ պատկեր չեն տալիս:[35]

Բանավեճի առարկա է նաև այն, թե որն է բռնարարների ծրագրերի հաջողության չափանիշը: Նման բանավեճ առաջանում է այն պատճառով, որ բռնությունը

34 Էքհարդտ Ց., Շրամ Ջ., «Կոգնիտիվ վարքային միջամտությունը զուգընկերների նկատմամբ բռնություն կիրառող տղամարդկանց հետ», Eckhardt C, Schram, J. 2009. Cognitive behavioral interventions for partner abusive men. In P. Lehmann (Ed.), Interventions for intimate partner violence: A strengths approach. New York, NY: Springer Publishing.
35 Էդվարդ Գ., 2012թ. «Ծեծողների ծրագրերի ապագան. վերագնահատելով ապացույցների վրա հիմնված պրակտիկան», Լիբանան, Հյուսիսարևելյան համալսարանի հրատարակություն (Edward Gondolf. 2012. The Future of Batterer Programs: Reassessing evidence-based practice. Lebanon, NH: Northeastern University Press)

նվազեցնելուն ուղղված աշխատանքի գնահատման մեթոդաբանական մոտեցումները տարբերվում են: Կան անհամաձայնություններ տվյալների մեկնաբանման շուրջ, բռնարարների ծրագրերի դեպքում՝ «հաջողության» սահմանման շուրջ: [36]Ուսումնասիրությունները որպես կանոն կիրառում են կրկնվող զոհականացման դեպքերի նվազումը որպես հաջողված արդյունքի չափանիշ, սակայն հստակ չէ, թե այս գործակիցը բռնության լրիվ դադարեցման, թե նվազման ցուցանիշ է, կրկնվող դեպքերի ճշգրիտ հետևողականության ընթացքը և արդյոք այն հաշվի առնում է հոգեբանական բռնությունն ու հարկադրանքը:[37] Ավելին, ռեցիդիվի գնահատումը նույնպես միանշանակ չէ. բռնության զոհերի ահազանգերի հիման վրա ռեցիդիվի շատ ավելի բարձր ցուցանիշներ են արձանագրվում, քան պաշտոնական տվյալներում (որոնք վերցվում են ոստիկանությունից, դատարաններից և կալանավայրերից) և բռնարարների կամավոր հաշվետվություններում, ովքեր կարող են թերներկայացնել բռնության դեպքերի իրական թիվը:[38] Հաշվի առնելով բռնարարների ծրագրերի գնահատման խոչընդոտներն ու սահմանափակումները միայն ռեցիդիվի մասով՝ գնալով ավելի շատ հետազոտողներ են կոչ անում ընտրել կրկնահանցագործությունից անդին գնացող ցուցանիշներ և գնահատել այլ փոփոխականներ, որոնց հարցում ծրագիրը կարող է փոփոխության հասնել:[39] Ոմանք պնդում

36 Վեսթմարլենդ և այլք, «Ընտանեկան բռնարարք կատարող անձանց ծրագրեր. Ի՞նչն է համարվում հաջողություն», 2010թ., Լոնդոնի մետրոպոլիտ համալսարան և Դուրհամի համալսարան (Westmarland N, Kelly L, Chalder-Mills J. 2010. Domestic violence perpetrator programmes: What counts as success? London Metropolitan University and Durham University, London and Durham)
37 Նույնը.
38 Արիաս Է, Արս Ռ, Վիլարինյո Մ, «Ծեծողների միջամտության ծրագրեր. արդյունավետության մետա-վերլուծական ակնարկ», 2013թ, Սոցիալ-հոգեբանական միջամտություն, 22(2):153-160 (Arias E, Arce R, Vilariño M. Batterer intervention programmes: A meta-analytic review of effectiveness. 2013. Psychosocial Intervention. 22(2):153-160)
39 Լիլա Մ.և այլք, «Ծեծողների միջամտության ծրագրերում ռեցիդիվի ռիսկի նվազեցման գնահատում. Ծրագրերի արդյունավետության գնահատման առանցքային ցուցիչ», 2014թ., Սոցիալ-հոգեբանական միջամտություն, 23(3):217-223 (Lila M, Oliver A, Catalá-Miñana A, Conchell R. Recidivism risk reduction assessment in batterer intervention programs: A key indicator for program efficacy evaluation. 2014. Psychosocial Intervention. 23(3):217-223)

են, որ գնահատման այնպիսի մոտեցում պետք է որդեգրվի, որը կներառի բռնարարի վարքի առանձնահատկությունները (օրինակ՝ բարելավված հարաբերություններ, որտեղ կա հարգանք ու լավ հաղորդակցություն, այլոց վրա բռնության թողած ազդեցության ավելի բարձր ինքնագիտակցում, բռնարարի վարքում այլ դրական փոփոխություններ և կին ու երեխա տուժողների ընդհանուր առմամբ ավելի բարձր ապահովություն ու բարեկեցություն):[40] Այն նաև կարող է ներառել համակարգային ազդեցության գնահատում, օրինակ՝ բռնության զոհերին ու բռնարարներին ծառայություններ տրամադրող տարբեր մարմինների միջև տեղեկատվության փոխանակման և աշխատանքների համակարգման որակը:[41]

Փոխվելու մոտիվացիա և պատրաստակամություն

Քանի որ Դուլութի մոդելի և ընդհանուր առմամբ բռնարարների ծրագրերի արդյունավետությունը հարցականի տակ է դրվել, ոլորտում փորձում են ընթանալ նոր ուղով՝ ուսումնասիրելով բռնարար տղամարդկանց միջամտությունների արդյունավետությունը բարձրացնելու նոր եղանակներ: Դիտարկելով տարբեր մոդելների կոնկրետ

40 Վեսթմարլենդ և այլք, «Ընտանեկան բռնարարք կատարող անձանց ծրագրեր. Ի՞նչն է համարվում հաջողություն», 2010թ., Լոնդոնի մետրոպոլիտ համալսարան և Դուրհամի համալսարան (Westmarland N, Kelly L, Chalder-Mills J. 2010. Domestic violence perpetrator programmes: What counts as success? London Metropolitan University and Durham University, London and Durham)

41 Ոչ բռնությանը, Ինչ կարելի է անել ընտանիքի հանդեպ բռնություն գործադրող տղամարդկանց պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ. https://www.ntv.org.au/wp-content/uploads/2016/12/Strengthening-perpetrator-accountability.pdf

միջամտություններ՝ հետազոտությունները ցույց են տալիս, որ լավատեսության նշույլներ կան այն միջամտությունների դեպքում, որոնք անդրադառնում են բռնարար տղամարդկանց՝ փոխվելու մոտիվացիային ու պատրաստակամությանը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ այցելուներին միտված մոտեցումները, ինչպիսին է օրինակ՝ մոտիվացիան բարձրացնող հարցազրույցը, զգալիորեն նվազեցնում են ռեցիդիվը:[42] Մոտիվացիան բարձրացնող հարցազրույցը խորհրդատվության մոտեցում է, որն ուղղորդող է, միտված է այցելուին և կենտրոնացած է կոնկրետ նպատակների շուրջ՝ առանցքում ունենալով այցելուից իր վարքի փոփոխության հասնելու նպատակը՝ ոչ թե այն հարկադրելու միջոցով, այլ օգնելով նրան արտաբերել դա սեփական կամքով և օգնելով լուծել այդ կապակցությամբ նրա ամբիվալենտ/ներհակադիր զգացմունքները:[43] Բռնարարների հետ աշխատանքի մոտիվացիան բարձրացնող մոտեցումների խորին հետազոտությունները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ մոտիվացիան բարձրացնող հարցազրույցը նշանակալի ազդեցություն է ունեցել ռեցիդիվի վրա, երբ բռնարարի կողմից ստանդարտ բռնարարների ծրագրին մասնակցելուց հետո 6-12 ամսվա ընթացքում այն չափվել է տուժողի վկայությունների միջոցով:[44]

42 Էքհարդտ Ս. և այլք «Ինտիմ զուգընկերների հանդեպ բռնարարք կատարող անձանց և դրանց զոհերի համար միջամտության ծրագրերի արդյունավետությունը», 2013թ., Բռնություն զուգընկերոջ կողմից 4(2):196-231 (Eckhardt C, Murphy C, Whitaker D, Sprunger J, Dykstra R, Woodard K. The Effectiveness of Intervention Programs for Perpetrators and Victims of Intimate Partner Violence. 2013. Partner Abuse. 4(2):196-231
43 Ռոլնիկ Ս.,, Միլլեր Վ., «Ի՞նչ է մոտիվացիան բարձրացնող հարցազրուցավարումը», 1995թ., Վարքային և կոգնիտիվ հոգեթերապիա, 23(4): 325–334 (Rollnick, Stephen; Miller, William R. What is Motivational Interviewing? 1995. Behavioural and Cognitive Psychotherapy. 23(4): 325–334)
44 Ինչն է արդյունավետ, Հանցագործությունների նվազեցման համակարգային հետազոտությունների շարք: Ընտանեկան բռնարարքներ կատարող անձանց թերապիայից առաջ մոտիվացիան բարձրացնող հարցազրուցավարման հետևողական հետազոտություն, (What Works: Crime Reduction Systematic Review Series, A systematic review of motivational approaches as a pre-treatment intervention for domestic violence perpetrator programmes), 2016, https://www.college.police.uk/News/College-news/Documents/Motivational_intervewing.pdf

Հետազոտություններից մեկը նույնիսկ վկայում է, որ մոտիվացիան բարձրացնող հարցազրույցի 1 կամ 2 հանդիպումը հանգեցրել է դրական արդյունքների և ներգրավել բռնարար այցելուներին թերապիայի մեջ:[45] Կա ևս մեկ հետազոտություն, որում փաստվում է, որ բռնարարների ծրագրում փոխվելու պատրաստակամություն դրսևորող տղամարդիկ (ովքեր երբևէ միտք են ունեցել իրենց վարքը փոփոխել կամ որևէ քայլ անել) ավելի հավանական է, որ նպաստավոր փոփոխություններ կարձանագրեն ապրումակցման, բռնարար վարքագծի, հաղորդակցության փոփոխության առումով, քան նրանք, ում մտքով դեռևս չի անցել իրենց վարքագիծը փոխել: Ուստի հետազոտողները եզրահանգում են, որ նման աշխատանքում ներգրավվելու կամք ու պատրաստվածություն դրսևորող անձինք ավելի հավանական է, որ օգուտ կստանան դրանից, այդ իսկ պատճառով մոտիվիացիան բարձրացնող հարցազրույցի մոտեցման կիրառումը նախքան բռնարարների ծրագրում նրանց ներգրավելը կարող է բարձրացնել ծրագրի վերջնական արդյունավետությունը:[46]

Մոտիվացիան բարձրացնող հարցազրույցի առանցքային սկզբունքն այն է, որ սեփական վարքը փոխելիս մարդիկ զգան ու անցում կատարեն փոփոխության տարբեր փուլերով, նրանք կարող են

45 Մասեր Փ և այլք, Զուգընկերների նկատմամբ բռնություն գործադրող տղամարդկանց հետ խմբային միջամտությունից առաջ մոտիվացիան բարձրացնող հարցազրուցավարում, 2008թ., Բռնություն և զոհեր, 23(5):539-557 (Musser P, Semiatin J, Taft C, Murphy C. Motivational Interviewing as a Pregroup Intervention for Partner-Violent Men. 2008. Violence and Victims. 23(5):539-557)

46 Սկոթ Ք., Վոլֆ Դ., Փոխվելու պատրաստակամությունը որպես ծեծողների հետ աշխատանքի արդյունքի նախապայման, 2003թ., Խորհրդատվության և կլինիկական հոգեբանության ամսագիր, 71:879-889 (Scott K, Wolfe D. Readiness to change as a predictor of outcome in batterer treatment. 2003. Journal of Consulting and Clinical Psychology. 71:879-889)

վարքի փոփոխության կոնկրետ ուղղությամբ ընթանալ կամ կարող են ցիկլային փոփոխություններով ընթանալ, հետընթաց և առաջընթաց ապրեն անցնելով այդ փուլերի մինջով, մինչ վերջնականապես կհասնեն իրենց վարքի փոփոխության:[47] Այս մոտեցումը հատկապես խորհուրդ է տրվում այնպիսի բռնարարներին, ովքեր դիմադրում են վարքի փոփոխությանը կամ ամբիվալենտ/ներհակադիր վերաբերմունք ունեն:[48] Մոտիվացիան բարձրացնող հարցազրույցի առանցքներն են՝ ապրումակցող հաղորդակցությունն ու այցելուի տեսակետի ընդունումն առանց դատողության կամ քննադատության, այցելուի ուղղորդումը, որպեսզի նա ինքը բացահայտի իր վարքի ու անձնական նպատակների անհամապատասխանությունը, այցելուի կողմից խնդիրների վերհանումն ու դրանց լուծումների փնտրտուքն առանց առճակատման կամ փոփոխության համար վիճաբանության, աջակցություն այցելուին, որ նա հավատա, որ կարող է փոխվել:[49]

47 Ինչն է արդյունավետ, Հանցագործությունների նվազեցման համակարգային հետազոտությունների շարք: Ընտանեկան բռնարարքներ կատարող անձանց թերապիայից առաջ մոտիվացիան բարձրացնող հարցազրուցավարման հետևողական հետազոտություն, (What Works: Crime Reduction Systematic Review Series, A systematic review of motivational approaches as a pre-treatment intervention for domestic violence perpetrator programmes), 2016, https://www.college.police.uk/News/College-news/Documents/Motivational_intervewing.pdf

48 Ռուբակ Ս. և այլք, Մոտիվացիան բարձրացնող հարցազրուցավարում. համակարգային ուղումնասիրություն և մետավերլուծություն, 2005թ., (Rubak S, Sandbæk A, Lauritzen T, Christensen B. Motivational interviewing: a systematic review and meta-analysis. 2005. Br J Gen Pract. 55(513):305-312.1)

49 Ինչն է արդյունավետ, Հանցագործությունների նվազեցման համակարգային հետազոտությունների շարք: Ընտանեկան բռնարարքներ կատարող անձանց թերապիայից առաջ մոտիվացիան բարձրացնող հարցազրուցավարման հետևողական հետազոտություն, (What Works: Crime Reduction Systematic Review Series, A systematic review of motivational approaches as a pre-treatment intervention for domestic violence perpetrator programmes), 2016, https://www.college.police.uk/News/College-news/Documents/Motivational_intervewing.pdf

Անհատական մոտեցումներ

Բռնարարների հետ աշխատանքի մեկ այլ խոստումնալից ուղի է անհատականացված, համապատասխանեցված կամ կարիքների հիման վրա մշակված մոտեցումների կիրառումը, երբ աշխատանքը հաշվի է առնում բռնարարի անհատական հատկանիշները: Վերլուծությունները հուշում են, որ թեև բռնարարների ծրագրերն ունենում են թույլ դրական ազդեցություն, եթե ընդհանրապես ունենում են, ընդլայնված միջամտությունները (օրինակ՝ ինտենսիվ ծրագրերի ու թերապիայի մշակումը այնպիսի խնդիրների շուրջ, ինչպիսին է՝ ալկոհոլի չարաշահումն) ավելի խոստումնալից արդյունքներ են ապահովում և հաճախ երաշխավորված են՝ կախված դեպքից:[50] Ավելի ու ավելի շատ են բռնարարների հոգեպաթոլոգիան, զայրույթի հասնելու խանգարումը, կոգնիտիվ խանգարումները, մանկության տրավմաների հետևանքները և այլ գործոններ հաշվի առնելու կարևորությունը վկայող ապացույցները: Վերը նշված գործոններն ազդում են բռնության կրկնության ռիսկի և բռնարարի հետ աշխատանքի եղանակների ընտրության վրա:[51]

Բռնարարների անցյալը, անհատական բնույթն ու այլ հանգամանքներն ուսումնասիրելով և այնպիսի

50 Էդվարդ Գ., 2012թ. «Ծեծողների ծրագրերի ապագան. վերագնահատելով ապացույցների վրա հիմնված պրակտիկան», Լիբանան, Հյուսիսարևելյան համալսարանի հրատարակություն (Edward Gondolf. 2012. The Future of Batterer Programs: Reassessing evidence-based practice. Lebanon, NH: Northeastern University Press)
51 Էքհարդտ Ս. և այլք «Ինտիմ զուգընկերների հանդեպ բռնարարք կատարող անձանց համար միջամտության ծրագրերը: Եզրահանգումներ կլինիկական հետազոտության տեսանկյունից», 2006թ., Հանրային առողջապահություն, 121(4):369-381 (Eckhardt C, Murphy C, Black D, Suhr L. Intervention Programs for Perpetrators of Intimate Partner Violence: Conclusions from a Clinical Research Perspective. 2006. Public Health Rep. 121(4):369-381)

համապարփակ մոտեցում դրսևորելով, որը հաշվի է առնում նրա անհատականությունը, հոգեբանական խանգարումները, անցյալում ունեցած տրավմաները և հարաբերություններում խնդիրները՝ հնարավոր է լուծել վարքի փոփոխմանը խանգարող խոչընդոտները: Այդ կերպ հնարավոր է բռնարարների ծրագրերում ներառել այլ ծրագրեր (հայրության կրթություն, ալկոհոլի/հոգեմետ նյութերի չարաշահման բուժում, աշխատանքային որակավորում):[52] Մեծացնելով հավանականությունը, որ հոգեկան առողջության ու ալկոհոլի/հոգեներգործուն նյութերի չարաշահման հետ կապված խնդիրներ կարող են բացահայտվել, որոնք լուծման կարիք ունեն, ավելի հեշտ կլինի նվազագույնի հասցնել խնդրահարույց վարքն ու վերաբերմունքը:[53] Հետազոտությունները պարզել են, օրինակ, որ հոգեբանական խանգարումներով տղամարդիկ ավելի լավ արդյունքների են հասնում իրենց հետ որոշակիորեն ընտրված մոդելով աշխատանքից՝ կախված իրենց հոգեբանական խանգարումից (օր՝ հակասոցիալական հակումներ, դեպրեսիա և այլն):[54]

Բռնարարների հետ անհատական աշխատանքի մոտեցումների օգտին են նաև հետազոտական տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ կախված բռնարարի անհատականությունից՝ կարելի է կանխորոշել նրա հետ աշխատանքի արդյունքը: Օրինակ, տղամարդիկ, որոնք բռնությունն ուղղում են միմիայն իրենց կողակցի հանդեպ, առավել նվազ բռնություն են կիրառում և ավելի հավանական է, որ ժամանակի ընթացքում նրանք կդադարեն բռնի լինել, եթե նրանց հետ համապատասխան աշխատանք տարվի, քան այն տղամարդիկ, ովքեր ընդհանուր առմամբ ցուցաբերում

52 Էդվարդ Գ., 2012թ. «Ծեծողների ծրագրերի ապագան. վերագնահատելով ապացույցների վրա հիմնված պրակտիկան», Լիբանան, Հյուսիսարևելյան համալսարանի հրատարակություն (Edward Gondolf. 2012. The Future of Batterer Programs: Reassessing evidence-based practice. Lebanon, NH: Northeastern University Press)
53 URBIS, Ընտանեկան բռնություն կիրառող անձանց մասին գրականության ուսումնասիրություն, 2013թ. (Literature Review on Domestic Violence Perpetrators, 2013), https://www.dss.gov.au/sites/default/files/documents/09_2013/literature_review_on_domestic_violence_perpetrators.pdf
54 Նույնը:

են բռնարար վարք (ովքեր բռնություն են կատարում ոչ միայն կողակիցների, այլև այլոց հանդեպ):[55] Մեկ այլ հետազոտություն պարզել է, որ ընդհանուր առմամբ բռնարար տղամարդկանց մոտ ավելի բարձր է կրկին բռնություն կիրառելու ռիսկը, եթե նրանք երիտասարդ են, ունեն քրեական անցյալ, ալկոհոլային և հոգեմետ նյութեր ավելի շատ են օգտագործում, ունեն ցածր կրթական մակարդակ և հիմնականում գործազուրկ են:[56] Սա համապատասխանում է մեկ այլ ուսումնասիրության արդյունքների, որոնք ցույց են տալիս, որ բռնարարների հետ միջամտության ծրագրերն ավելի հավանական է, որ ավարտին կհասցվեն ու վարքային փոփոխության (հետևաբար՝ ռեցիդիվի նվազման) կհանգեցնեն, եթե փոխվելու մոտիվացիա ու պատրաստակամություն ունեցող բռնարար տղամարդիկ քրեական արդարադատության համակարգի հետ նախկինում որևէ շփում չեն ունեցել կամ քիչ են ունեցել, չեն չարաշահում ալկոհոլ և այլ նյութեր, չունեն հոգեկան առողջության խնդիրներ, աշխատում են, ամուսնացած են, երիտասարդ չեն, ունեն առավել բարձր կրթության մակարդակ:[57] Տվյալները որոշ հետազոտողների մղել են նույնիսկ պնդելու, որ անհատական մոտեցումներն ավելի մեծ ազդեցություն ունեն ռեցիդիվի ցուցանիշների վրա, քան բռնարարների հետ կիրառվող տեսական մոդելը:[58]

55 Ասրոն Ս, Բոլորիեր Ռ, «Ծեծողների միջամտության ծրագրերի վրա նոր շեշտադրում անելու անհրաժեշտությունը», 2017թ, «Տրավմա Բռնություն Չարաշահում 18(4):425-432 (Aaron S, Bealaurier R. The Need for New Emphasis on Batterers Intervention Programs. 2017. Trauma Violence Abuse. 18(4):425-432)

56 Կանտոս և այլք, «Միայն ընտանիքում և ընդհանրապես զուգընկերների նկատմամբ բռնարարքեր կատարող անձանց կողմից ծրագրերի ավարտումն ու այլ ուղիղ համեմատականներ», 2015թ., Վարքային հոգեբանություն, 23(3):549-569 (Cantos A, Goldstein D, Brenner L, O'Leary K, Verborg R. Correlates and Program Completion of Family Only and Generally Violent Perpetrators of Intimate Partner Violence. 2015. Behavioral Psychology. 23(3):549-569)

57 URBIS, Ընտանեկան բռնություն կիրառող անձանց մասին գրականության ուսումնասիրություն, 2013թ. (Literature Review on Domestic Violence Perpetrators, 2013), https://www.dss.gov.au/sites/default/files/documents/09_2013/literature_review_on_domestic_violence_perpetrators.pdf

58 Բիգան և այլք, ««Տանն՝ անվտանգ» գործիքի բնութագրիչները որպես զուգընկերոջ նկատմամբ բռնարարք կատարող անձի փոփոխվելու պատրաստակամությունը չափող գործիք», 2003թ., 13(1):80–107 (Սոցիալական աշխատանքայի պրակտիկայի հետազոտություն, Begun A, Murphy C, Bolt D, Weinstein B, Strodthoff T, Short L, Shelley G. Characteristics of the Safe at Home instrument for assessing readiness to change intimate partner violence. 2003. Research on Social Work Practice. 13(1):80–107)

Ռիսկայնության, կարիքների և արձագանքման սկզբունքները

Բռնարարների անհատական գործոնների հետ հաշվի նստող մոտեցումները հետևում են ռիսկայնության, կարիքների և արձագանքման սկզբունքներին (ՌԿԱ):[59] ՌԿԱ-ն վերաբերում է բռնարարի կողմից ներկայացվող վտանգի գնահատման հիման վրա համապատասխան անհատական արձագանքին՝ հաշվի առնելով նրա կոնկրետ կարիքները (հոգեբանական, սոցիալական և հուզական գործունակության), համապատասխանեցվելով սովորելու նրա ոճին, կոգնիտիվ կարողություններին, անհատականությանն ու մոտիվացիային:[60] Պատմականորեն ընտանիքի պատմության, տրավմայի, հոգեներգործուն նյութերից կախվածության կամ հոգեկան առողջության դիտարկումը համարվել է շեղում ֆեմինիստական սկզբունքներից, այդուհանդերձ տվյալները ցույց են տալիս, որ միայն սեքսիզմի, ուժի/իշխանության ու արական արտոնության վրա կենտրոնանալն արդյունավետ չէ, ու կարիք կա հաշվի

59 Ռադաց Դ., Ռայթ Է., «Ծեծողների միջամտության ծրագրերում արդյունավետ միջամտության սկզբունքների ներդրումը», 2015թ. Տրավմա Բռնություն և Չարաշահում 17(1):72-87: Արդյունավետ միջամտությունների սկզբունքների համար՝ տես աղյուսակ 1, էջ 74 (Radatz D, Wright E. Integrating the Principles of Effective Intervention into Batterer Intervention Programming: The Case for Moving Toward More Evidence-Based Programming. 2015. Trauma Violence and Abuse. 17(1):72-87

60 Ինչն է արդյունավետ, Հանցագործությունների նվազեցման համակարգային հետազոտությունների շարք: Ընտանեկան բռնարարքներ կատարող անձանց թերապիայից առաջ մոտիվացիան բարձրացնող հարցազրուցավարման հետևողական հետազոտություն, (What Works: Crime Reduction Systematic Review Series, A systematic review of motivational approaches as a pre-treatment intervention for domestic violence perpetrator programmes), 2016, https://www.college.police.uk/News/College-news/Documents/Motivational_intervewing.pdf

առնել այն գործոնները, որոնք կարող են բռնարարների հետ աշխատանքի ընթացքում բռնությունն ավելի սաստկացնել:

Ցածր ռիսկայնությամբ բռնարարների գործած բռնարարքը սովորաբար խոսքային է, կարող է ներառել ոչ վտանգավոր հարձակումներ, որոնք լուրջ վնաս հասցնելու ռիսկ չեն պարունակում: Չափավոր ռիսկայնությամբ բռնարարները նրանք են, ում պարագայում ռիսկի ցուցիչները հստակ տարբերակելի են, սակայն անհավանական է, որ նրանք լուրջ վնաս հասցնեն, բացառությամբ հանգամանքների թելադրանքի, օրինակ՝ ալկոհոլի կամ թմրանյութերի չարաշահման, հարաբերությունների խզման կամ կյանքում լուրջ կորստի: Բարձր ռիսկայնությամբ բռնարարների մոտ լուրջ վնաս հասցնելու ռիսկի հստակ տարբերակելի ցուցիչներ կան: Նման վնաս կարող է հասցվել ցանկացած պահի, իսկ հետևանքները կլինեն շատ լուրջ:

Ռիսկայնության սկզբունքի հետ կապված աշխատանքը ենթադրում է բռնարարների գնահատում և դասակարգում ցածր, միջին ու բարձր ռիսկային խմբերում, համադրում թերապիայի ինտենսիվության հետ, որում ինտենսիվ աշխատանքներն արվում են բարձր ռիսկայնությամբ բռնարարների հետ:

Ռիսկայնության սկզբունքի հետ կապված աշխատանքը ենթադրում է բռնարարների գնահատում և դասակարգում ցածր, միջին ու բարձր ռիսկային խմբերում, համադրում թերապիայի ինտենսիվության հետ, որում ինտենսիվ աշխատանքներն արվում

են բարձր ռիսկայնությամբ բռնարարների հետ:[61] Իրականում հետազոտությունները ցույց են տալիս, որ ինտենսիվ միջամտություններն առավել հարմար են միջին կամ բարձր ռիսկայնությամբ բռնարարների դեպքում, ովքեր ավելի շատ են կանխատրամադրված կրկին բռնության դիմելու, մինչ նույն ինտենսիվությամբ ծրագիրը ցածր ռիսկայնությամբ բռնարարների հետ կարող է իրականում ավելի շատ վնաս տալ, քան օգուտ:[62] Հետազոտողները կարծում են, որ սրա պատճառն այն է, որ բռնարարների ծրագրերին այցելելիս՝ ցածր ռիսկայնությամբ բռնարարները հանդիպում են բարձր ռիսկայնությամբ բռնարարների, ովքեր ավելի հավանական է, որ կդրսևորեն հակասոցիալական վարքագիծ ու կկատարեն հանցանքներ:[63] Կան ընտանեկան բռնության ռիսկի բազմաթիվ գնահատումներ,[64] որոնք նաև տրամադրում են ուղեցույցներ, աշխատակազմի դասընթացներ ու կիրառության սկզբունքներ:

61 Ռադաց Դ., Ռայթ Է., Ծեծողների միջամտության ծրագրերում արդյունավետ միջամտության սկզբունքների ներդրումը, 2015թ. Տրավմա Բռնություն և Չարաշահում 17(1):72-87: Արդյունավետ միջամտությունների սկզբունքների համար՝ տես աղյուսակ 1, էջ 74 (Radatz D, Wright E. Integrating the Principles of Effective Intervention into Batterer Intervention Programming: The Case for Moving Toward More Evidence-Based Programming. 2015. Trauma Violence and Abuse. 17(1):72-87)

62 Դատական նորարարության կենտրոն, Իրավախախտների հետ աշխատելու՝ փաստերի վրա հիմնված ստրատեգիաներ, 2014թ.(Center for Court Innovation, Evidence-Based Strategies for Working with Offenders, 2014), http://www.courtinnovation.org/sites/default/files/documents/EvidenceBasedStrategiesForWorkingWithOffenders.pdf

63 Ռադաց Դ., Ռայթ Է., «Ծեծողների միջամտության ծրագրերում արդյունավետ միջամտության սկզբունքների ներդրումը», 2015թ. Տրավմա Բռնություն և Չարաշահում 17(1):72-87: Արդյունավետ միջամտությունների սկզբունքների համար՝ տես աղյուսակ 1, էջ 74 (Radatz D, Wright E. Integrating the Principles of Effective Intervention into Batterer Intervention Programming: The Case for Moving Toward More Evidence-Based Programming. 2015. Trauma Violence and Abuse. 17(1):72-87)

64 Ահա ռիսկայնության գնահատման առավել գործածվող մոտեցումներ՝ Spousal Assault Risk Assessment (SARA), Co-ordinated Action Against Domestic Abuse - Domestic Abuse, Stalking and Honour Based Violence (CAADA-DASH), the Duluth Risk Assessment, COMPAS, LSI-R գործիքներ և ORAS գործիքներ: Եվրոպական ծրագրերում գործածվող SARA գործիքը դրական արդյունքների է բերել և առավելագույնս տարածված է ծառայություններ մատուցողների և ոստիկանական մարմինների շրջանում:

Ռիսկայնության որոշ չափիչներ հաշվի են առնում որոշակի հոգեբանական փոփոխականներ, որոշներն էլ հաշվի չեն առնում դրանք, սակայն ամենակարևորը՝ բոլորն էլ չափում են հարաբերությունում բռնության մակարդակը:[65]

Կարիքների սկզբունքի հետ կապված ռեցիդիվը նվազեցնելու հարցում հաջողության հասնելու համար միջամտությունները պետք է թիրախեն ռիսկայնության/կարիքների «առանցքային ութ» գործոնները՝ ըմբռնելով, որ բռնության նվազեցումը առավելագույնի կհասնի, եթե հանցագործ վարքի հետ կապված խնդիրները լուծում ստանան և բռնարարների հետ տարվի այնպիսի աշխատանք, որը կանդրադառնա նրանց տարբեր կարիքներին:[66] «Առանցքային ութ» գործոնները հետևյալն են՝ 1 քրեական վարքագծով անցյալ, 2 հակասոցիալական անհատականություն, 3 քրեածին մտածողության դրսևորումներ, 4 հակասոցիալական ընկերների հետ հաճախ շփումներ, 5 չամուսնացած կամ ընտանեկան անկայունություն, 6 գործազրկություն և անաշխատունակություն, 7 այլ մարդկանց օգուտ տվող հասարակական կամ ազատ ժամանցային գործունեությամբ չզբաղվելը, 8 ալկոհոլի/հոգեներգործուն նյութերի չարաշահումը:[67] Ֆեմինիստական շատ կրթահոգեբանական ծրագրեր, որոնք բռնարարների հետ աշխատանքի մեջ շեշտը դնում են վերաբերմունքի ու համոզմունքների

65 Ռադաց Դ., Ռայթ Է., «Ծեծողների միջամտության ծրագրերում արդյունավետ միջամտության սկզբունքների ներդրումը», 2015թ. Տրավմա Բռնություն և Չարաշահում 17(1):72-87: Արդյունավետ միջամտությունների սկզբունքների համար՝ տես աղյուսակ 1, էջ 74 (Radatz D, Wright E. Integrating the Principles of Effective Intervention into Batterer Intervention Programming: The Case for Moving Toward More Evidence-Based Programming. 2015. Trauma Violence and Abuse. 17(1):72-87)

66 Դատական նորարարության կենտրոն, Իրավախախտների հետ աշխատելու՝ փաստերի վրա հիմնված ստրատեգիաներ, 2014թ.(Center for Court Innovation, Evidence-Based Strategies for Working with Offenders, 2014), http://www.courtinnovation.org/sites/default/files/documents/EvidenceBasedStrategiesForWorkingWithOffenders.pdf

67 Նույնը

փոփոխության վրա, հաջողություն չեն ունենում, քանի որ նման ծրագրերը չեն կենտրոնանում հակասոցիալական վերաբերմունքի և քրեածին վարքագծի համար ռիսկային գործոն հանդիսացող այլ կարևոր գործոնների վրա:[68] Ռիսկայնության/կարիքների գնահատման բոլոր մոտեցումները ներառում են վերը նշված 8 գործոնները:

Վերջապես, արձագանքման սկզբունքը ենթադրում է, որ բռնարարի հետ աշխատանքն առավել արդյունավետ է, եթե ընդունում է կառուցողական կոգնիտիվ վարքային մոտեցում, որի հիման վրա կազմվում է փաստերի վրա հիմնված ծրագիր, ինչն էլ համապատասխանեցված է լինում բռնարարի սովորելու ոճին և այլ հատկանիշներին: Սա լավագույնս է օգնում վերափոխել բռնի վարքի մղող մտածողության կաղապարները և բռնարարներին ապահովում է սեփական վարքը վերահսկելու ու փոխելու նոր ստրատեգիաներով:[69] Բռնարարների հետ աշխատողները լավագույն արդյունքներին հասնելու համար պետք է ներառեն սովորելու այնպիսի ստրատեգիաներ, որոնք կիրառում են մոդելավորում, ամրապնդում, հմտությունների զարգացում, կոգնիտիվ վերակառուցում, խնդիրների լուծում և դերախաղ:[70]

68 Ռադաց Դ., Ռայթ Է., «Ծեծողների միջամտության ծրագրերում արդյունավետ միջամտության սկզբունքների ներդրումը», 2015թ. Տրավմա Բռնություն և Չարաշահում 17(1):72-87: Արդյունավետ միջամտությունների սկզբունքների համար՝ տես աղյուսակ 1, էջ 74 (Radatz D, Wright E. Integrating the Principles of Effective Intervention into Batterer Intervention Programming: The Case for Moving Toward More Evidence-Based Programming. 2015. Trauma Violence and Abuse. 17(1):72-87)
69 Դատական նորարարության կենտրոն, Իրավախախտների հետ աշխատելու՝ փաստերի վրա հիմնված ստրատեգիաներ, 2014թ.(Center for Court Innovation, Evidence-Based Strategies for Working with Offenders, 2014), http://www.courtinnovation.org/sites/default/files/documents/EvidenceBasedStrategiesForWorkingWithOffenders.pdf
70 Ռադաց Դ., Ռայթ Է., «Ծեծողների միջամտության ծրագրերում արդյունավետ միջամտության սկզբունքների ներդրումը», 2015թ. Տրավմա Բռնություն և Չարաշահում 17(1):72-87: Արդյունավետ միջամտությունների սկզբունքների համար՝ տես աղյուսակ 1, էջ 74 (Radatz D, Wright E. Integrating the Principles of Effective Intervention into Batterer Intervention Programming: The Case for Moving Toward More Evidence-Based Programming. 2015. Trauma Violence and Abuse. 17(1):72-87)

Ծրագրային այլ ազդեցիկ գործոններ

Ծրագրում ներգրավվածություն

Բռնարարների ծրագրերում ներգրավվում են ինչպես բաժանված, այնպես էլ իրենց կանանց կամ զուգընկերների հետ հարաբերություն շարունակող տղամարդիկ: Նրանք ծրագրին կարող են մասնակցել կամավոր կերպով կամ դատարանի վճռի հիման վրա, որով նրանցից պահանջվում է նման ծրագրի մասնակցել: Միացյալ նահանգներից դուրս բռնարարների ծրագրերը բռնարարներից չեն պահանջում այդ ծրագիրն անցնել, փոխարենը՝ կենտրոնանում են ավելի լայն հասարակության մեջ փոփոխություններ ստեղծելու վրա:[71] Թեև ընդունված կարծիք է, թե սեփական կամքով ծրագրին միացած տղամարդկանց մոտ փոխվելու մոտիվացիան ավելի մեծ է, հետազոտությունները ցույց են տալիս, որ դատարանների վճռով նախաձեռնված մասնակցությունը, երբ ծրագրից դուրս գալու կամ չհաճախելու համար խիստ պատժամիջոցներ են սահմանված, ավելի է բարձրացնում բռնության կրկին չդիմելու հավանականությունը:[72] Հաճախ այնպես է, որ մասնակցության մոտիվացիան արտաքին գործոն է հանդիսանում, այսինքն տղամարդիկ ցանկանում են ցույց

71 Աարոն Ս, Բոլորիեր Ռ, Ծեծողների միջամտության ծրագրերի վրա նոր շեշտադրում անելու անհրաժեշտությունը, 2017թ, «Տրավմա Բռնություն Չարաշահում» 18(4):425-432 (Aaron S, Bealaurier R. The Need for New Emphasis on Batterers Intervention Programs. 2017. Trauma Violence Abuse. 18(4):425-432)

72 Եվրոպայի խորհուրդ, «Ընտանեկան և սեռական բռնարարքներ կատարած անձանց ծրագրեր. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածը», Council of Europe, Domestic and Sexual Violence Perpetrator Programmes: Article 16 of the Istanbul Convention: A collection of papers on the Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence, 2014, https://research-information.bristol.ac.uk/files/34955937/Article_16_English.pdf

տալ, որ քայլ են անում, որպեսզի իրենց հարաբերությունը չվտանգվի, կամ երեխաների նկատմամբ խնամակալության իրավունքից զրկվելու վախ ունեն, սակայն հենց այս պատճառներն էլ պակաս հավանական են դարձնում նրանց լիարժեք մասնակցությունը ծրագրերում:[73]

Ինչ վերաբերում է ծրագրում ներգրավմանը, դրա գնահատումը ենթադրում է որակական և քանակական տվյալների հավաքագրում բռնության զոհերից և դեպքերի վարման մեջ ներգրավված այլ կողմերից (դեպք վարող, ոստիկան, սոցիալական ծառայությունների աշխատողներ, դատական պաշտոնյաներ) և հստակ ձևաչափ ունեցող հարցազրույց բռնարարի հետ նախքան ծրագրին մասնակցելը՝ անդրադառնալով հետևյալ հարցերին՝ ընտանիքի կազմ, ընտանեկան կարգավիճակ, կախվածություն հոգեներգործուն նյութերից՝ թմրադեղերից կամ ալիոկոլից, հոգեկան խանգարում, զբաղվածություն, քրեական հետապնդում:[74] Որոշ գնահատումներ ավելի հեռու են գնում և մի քանի անհատական հանդիպում են անցկացնում բռնարարների հետ՝ մանրամասն բացատրելով ծրագրի ձևաչափը, բովանդակությունը, մեթոդները, ինչպես նաև դրա պահանջները, մասնակցի պարտականությունները, տվյալների գաղտնիության հարցերը:[75] Ծրագրի աշխատողները պետք է իրենք որոշեն արդյոք պատրաստ են ծրագրում ներգրավել որոշակի

73 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf
74 Կուրացի և այլք, «Ընտանեկան բռնարարքներ կատարած անձանց հետ աշխատանքի ծրագրեր. Եվրոպական ու միջազգային մոտեցումները», 2015թ, (Chiurazzi A, Arcidiacono C, Helm S. Treatment Programs for Perpetrators of Domestic Violence: European and International Approaches. 2015. New Male Studies. 4(3):5-22)
75 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf

ռիսկայնություն ցույց տվող տղամարդկանց և ընդհանուր առմամբ որ հանգամանքներում նրանք չեն աշխատի բռնարար տղամարդկանց հետ:[76]

Գնահատում և հետևողական աշխատանք

Ծրագրի առաջընթացի գնահատումների հետ կապված՝ լավ պրակտիկա է օգտվել գնահատման ստանդարտացված գործիքներից և հետազոտել ու հարցազրույցներ անցկացնել բռնությունից տուժած կանանց ու երեխաների հետ բռնարարի կողմից ծրագրին մասնակցելուց առաջ, ընթացքում և ծրագիրն ավարտելուց 6 ամիս հետո: Կարևոր է նաև, որ մասնակից տղամարդիկ իրենք լրացնեն հաշվետվություն յուրաքանչյուր 6 դասընթաց անցնելուց հետո (կամ ավելի հաճախ՝ կախված, թե քանի ամիսն է գնահատվել վարքի փոփոխության համար անհրաժեշտ ժամանակ): [77]

Երբ բռնարար մասնակիցն ավարտում է խմբային ու անհատական դասընթացները, ծրագրի աշխատակազմը պետք է շարունակի աշխատել նրանց հետ՝ տալով վերջնական կարծիք, մշակելով ծրագիրն ավարտելու պլան, թույլ տալով, որ մասնակիցը մտորի իր նվաճումների մասին, բացահայտի, թե ինչ մարտահրավերներ են դեռ չլուծված մնում և ինչպես է նա դրանք լուծելու: Որոշ դեպքերում խմբային դասընթացները շարունակում են բաց մնալ ծրագիրն ավարտած տղամարդկանց համար այնքան

76 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց. Ընտանեկան բռնարարների հետ աշխատանքի չափորոշիչներ մշակելու ուղեցույց, 2017, https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Resources_Activities/guidelines/5_2_2____Guidelines_for_Standards_2017.pdf
77 Կուրացի և այլք, «Ընտանեկան բռնարարքներ կատարած անձանց հետ աշխատանքի ծրագրեր. Եվրոպական ու միջազգային մոտեցումները», 2015թ, (Chiurazzi A, Arcidiacono C, Helm S. Treatment Programs for Perpetrators of Domestic Violence: European and International Approaches. 2015. New Male Studies. 4(3):5-22)

ժամանակ, որքան նրանք կուզեն:[78] Ծրագրի ավարտից հետո ցուցաբերված աջակցությունը բռնության զոհերին ստուգիչ հետևողական աշխատանքի կարևոր մաս է կազմում:

Դասընթաց և ձևաչափ

Դասընթացավարները ընդհանուր առմամբ որակավորված մասնագետներ են (հոգեբաններ, հոգեբույժներ, կրթողներ, սոցիալական աշխատողներ կամ խորհրդատուներ), ովքեր խմբեր վարելու և ընտանեկան բռնության ոլորտում աշխատելու մասնագիտական փորձ ունեն: Կարևոր է, որ նրանք ունենան ընտանեկան բռնության և դրան ուղեկցող դինամիկայի լավ ըմբռնում, կարողանան իրականացնել ռիսկի գնահատում, ունենան դեպք վարելու և խորհրդատվության աշխատանքային փորձ, ունենան խմբային աշխատանքներ վարելու և խմբային դասընթացներ անցկացնելու ունակություն:[79] Դեպք վարողները պետք է ստեղծեն աշխատանքի միջավայր, որը մասնակիցներին խրախուսում է ազատ զգալ տեղեկություններ բացահայտելու հարցում, աջակցում է, որ նրանք բացահայտեն ու փոխեն վնասաբեր վերաբերմունքը:[80] Բռնարարները որպես կանոն դիմադրում են և չեն բացահայտում իրենց բռնի ու ճնշող վարքագիծը, ուստի դեպք վարողները պետք է ունենան նման դիմադրության հետ վարվելու համապատասխան որակավորում ու կարողություններ:[81]

78 Նույնը
79 Նույնը
80 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Անդամ կազմակերպությունների կողմից զոհերի անվտանգության, նախկին զուգընկերներին աջակցության ու համագործակցության լավագույն պրակտիկայի զեկույց», 2017թ., WWP EN 2017 Report on member organisations' good practice in victim safety, (ex)partner support and partnerships, 2017, https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Reports/29032018_Good_Practice_Report_FINAL.pdf
81 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf

Բռնարարներից շատերը նման ծրագրերի հաճախում են մերժման, բռնության նվազեցման/անտեսման, ուրիշներին մեղադրելու հսկայական պաշարով, որը պակասեցնելը կարող է տևել երեք ամիս շաբաթական հանդիպումներով, իսկ շատ խնդիրներ ունեցող բռնարարների մոտ այս իրավիճակը վերացնելը կարող է տևել մեկ տարուց ավելի երկար:[82] Բացի բռնության հետ կապված ուղղակի թերապիայից, առավել բարձր ռիսկայնությամբ բռնարարների դեպքում պահանջվում է դեպք վարելու ռազմավարություն, որը հետևում է հավանական զոհերի անվտանգությանը և կիրառում է պրոակտիվ ձերբակալության քաղաքականություն, երբ լինում են բավարար ապացույցներ, որ բռնարարը կարող է կրկնահանցագործություն կատարել:[83]

Բռնարարների ծրագրերի հիմնական թերապևտիկ մասը ներառում է մի քանի դասընթաց, հիմնականում՝ խմբային ձևաչափով: Խմբային միջամտությունները լայնորեն տարածված են որպես բռնարարների վարքն ու վերաբերմունքը փոխելուն միտված ավելի համապատասխան ձևաչափ, քան անհատական կամ զույգով խորհրդատվությունը, քանի որ խմբային դասընթացների ժամանակ կա դերախաղերի, հետադարձ կարծիքների փոխանակման, շփման հնարավորություն:[84]

82 Հանրային քաղաքականության Վաշինգտոնի նահանգի ինստիտուտ, «Ի՞նչն է արդյունավետ ընտանեկան բռնություն կատարողների ռեցիդիվը նվազեցնելու հարցում», 2013թ.(Washington State Institute for Public Policy, What works to reduce recidivism by domestic violence offenders?, 2013), https://www.wsipp.wa.gov/ReportFile/1119/Wsipp_What-Works-to-Reduce-Recidivism-by-Domestic-Violence-Offenders_Full-Report.pdf
83 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քեննոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ», 2016թ., Բռնություն զուգընկերոջ կողմից, 7(4):355-460 (Babcock J, Armenti N, Cannon C, Lauve-Moon K, Buttell F, Ferreira R, Cantos A, Hamel J, Kelly D, Jordan C, et al. Domestic Violence Perpetrator Programs: A Proposal for Evidence-Based Standards in the United States. 2016. Partner Abuse. 7(4):355-460)
84 URBIS, Ընտանեկան բռնություն կիրառող անձանց մասին գրականության ուսումնասիրություն, 2013թ. (Literature Review on Domestic Violence Perpetrators, 2013), https://www.dss.gov.au/sites/default/files/documents/09_2013/literature_review_on_domestic_violence_perpetrators.pdf

Երբեմն կիրառվում է զույգերի կամ ընտանեկան թերապիա՝ կախված այն հանգամանքից, թե որոշակի պայմաններ ապահովվել են, թե ոչ, սակայն շատերն են խուսափում այս մոտեցումներից՝ այն հիմնավորումով, որ դրանց պատճառով պատասխանատվությունը բռնարարի վրայից հանվում է:[85] Որոշ ծրագրեր խմբային դասընթացների հետ մեկտեղ առաջարկում են նաև անհատական թերապիա՝ կախված կարիքից կամ արտակարգ հանգամանքներից, որոնց պատճառով բռնարարը չի կարողանում հաճախել խմբային դասընթացներին: [86]

Տարբեր ծրագրերի ու համատեքստերի նկարագրությունից պարզ է դառնում, որ խմբային աշխատանքներն ընդհանրապես վարում են երկու հոգի, հաճախ՝ մի կին, մի տղամարդ:[87] Համարվում է, որ տղամարդ-կին դեպք վարողների դինամիկան կարևոր է որպես երկու սեռերի միջև ոչ-բռնի հարաբերության օրինակ,[88] թեև մինչ օրս չեն անցկացվել փորձարարական ուսումնասիրություններ, թե դեպք վարողների տարբեր սեռերի համակցությունն ու ժողովրդագրական հատկանիշները ինչ ազդեցություն են ունեցել բռնարարների ռեցիդիվի վրա:[89]

85 Կուրացի և այլք, «Ընտանեկան բռնարարքներ կատարած անձանց հետ աշխատանքի ծրագրեր. Եվրոպական ու միջազգային մոտեցումները», 2015թ, (Chiurazzi A, Arcidiacono C, Helm S. Treatment Programs for Perpetrators of Domestic Violence: European and International Approaches. 2015. New Male Studies. 4(3):5-22)
86 Նույնը:
87 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քեննոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ», 2016թ., Բռնություն զուգընկերոջ կողմից, 7(4):355-460 (Babcock J, Armenti N, Cannon C, Lauve-Moon K, Buttell F, Ferreira R, Cantos A, Hamel J, Kelly D, Jordan C, et al. Domestic Violence Perpetrator Programs: A Proposal for Evidence-Based Standards in the United States. 2016. Partner Abuse. 7(4):355-460)
88 Կուրացի և այլք, «Ընտանեկան բռնարարքներ կատարած անձանց հետ աշխատանքի ծրագրեր. Եվրոպական ու միջազգային մոտեցումները», 2015թ, (Chiurazzi A, Arcidiacono C, Helm S. Treatment Programs for Perpetrators of Domestic Violence: European and International Approaches. 2015. New Male Studies. 4(3):5-22)
89 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քեննոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ», 2016թ., Բռնություն զուգընկերոջ կողմից, 7(4):355-460 (Babcock J, Armenti N, Cannon C, Lauve-Moon K, Buttell F, Ferreira R, Cantos A, Hamel J, Kelly D, Jordan C, et al. Domestic Violence Perpetrator Programs: A Proposal for Evidence-Based Standards in the United States. 2016. Partner Abuse. 7(4):355-460)

Ծրագրի պատշաճ կազմումը, յուրաքանչյուր դասընթացին հաջորդող քայլերի հստակ հերթականության սահմանումն օգնում է մասնակիցներին ձևավորել առօրյա, նվազեցնում է խմբային վարժանքների ժամանակ սեփական փորձառությամբ կիսվելու տագնապը, դասընթացավարին օգնում է խմբային բարդ դինամիկան վերահսկել:[90] Դասընթացավարները կարող են օգտագործել վիդեո և աուդիո նյութեր, հոգեդրամա, դերախաղեր, կարող են առաջարկել օրագիր վարել ինտերակտիվ տարբեր մեթոդների շարքում, որոնք անդրադառնում են ծրագրի հիմնական նպատակներին, հարցականի տակ դնում բռնության մերժումն ու զոհին մեղադրելը, նպաստում են ոչ բռնի վարքի բացահայտմանն ու խթանմանը:[91] Սովորաբար յուրաքանչյուր խմբային դասընթաց բաժանվում է երկու մասի՝ նախնական ծանթություն կամ քննարկում, որին հաջորդում են ծրագրում ներառված թեմաներին համապատասխան վերականգնողական աշխտանքը:[92] Աշխարհի տարբեր մասերում գործածվող ծրագրերի մասին բազմաթիվ նյութեր ու աշխատանքային մատյանների օրինակներ կան:

Լավ կառուցվածք ունեցող ծրագրերից մեկի օրինակ է Իսպանիայի Վալենսիայի համալսարանում մշակված և էկոլոգիական մոդելի շրջանակի վրա հիմնված

90 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf

91 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քեննոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ», 2016թ., Բռնություն զուգընկերոջ կողմից, 7(4):355-460 (Babcock J, Armenti N, Cannon C, Lauve-Moon K, Buttell F, Ferreira R, Cantos A, Hamel J, Kelly D, Jordan C, et al. Domestic Violence Perpetrator Programs: A Proposal for Evidence-Based Standards in the United States. 2016. Partner Abuse. 7(4):355-460)

92 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քեննոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ», 2016թ., Բռնություն զուգընկերոջ կողմից, 7(4):355-460 (Babcock J, Armenti N, Cannon C, Lauve-Moon K, Buttell F, Ferreira R, Cantos A, Hamel J, Kelly D, Jordan C, et al. Domestic Violence Perpetrator Programs: A Proposal for Evidence-Based Standards in the United States. 2016. Partner Abuse. 7(4):355-460)

«Կոնտեքստո» ծրագիրը (Contexto Programme):[93] «Կոնտեքստո» ծրագրում ներառված է 7 մոդուլ, որոնք պետք է մատուցվեն 38 շաբաթվա ընթացքում, յուրաքանչյուրը՝ 2 ժամ տևողությամբ: Ներածական մոդուլի նպատակն է վստահություն ստեղծել ու սահմանել հանդիպումների չափորոշիչները: Երկրորդ մոդուլում ներկայացվում են հիմնական հասկացություններն ու տերմինաբանությունը, ինչպես նաև իրականացվում են մերժման, բռնության անտեսման ու զոհին մեղադրելու շուրջ աշխատանքներ: 3-6-րդ մոդուլների ժամանակ մասնակիցներին տրամադրվում են իրենց խնդրի հետ վարվելու ռեսուրսներ ու հմտություններ: Վերջին մոդուլի ժամանակ ամրապնդվում են սովորած ստրատեգիաները, որպեսզի ընդհանուր առմամբ նվազեցվի ռեցիդիվի ռիսկը: Թերապիայից հետո 18 ամսվա ընթացքում անց է կացվում ստուգողական ևս 6 հանդիպում:[94] Իսպանիայում անցկացված մի հետազոտության համաձայն, որում ուսումնասիրվել են «Կոնտեքստո» ծրագիրն անցած 212 բռնարարներ, ծրագրի արդյունքները եղել են նշանակալիորեն դրական: Միջամտության ավարտին մասնակիցներն ավելի են հակված եղել ընդունել ու պատասխանատվություն վերցնել սեփական բռնարար վարքի համար և ցույց են տվել, որ ընկալում են ընտանեկան բռնության ծանր հետևանքները: Նրանց դեպքում հավանականությունը մեծ է, որ կրկնահանցագործություն տեղի չի ունենա:[95]

93 Հեյգման-Ուայթի մշակած էկոլոգիական մոդելի մասին տես՝ see: https://www.endviolenceagainstwomen.org.uk/wp-content/uploads/Hagemann_White_Diagram_Factors.pdf.
94 Լիլա Մ և այլք, ««Կոնտեքստո» ծրագիրը», 2010թ.(Lila M, Catalá A, Conchell R, García A, Lorenzo M, Terreros V. A research, training and intervention experience at University of Valencia with men convicted of violence against women: Programa Contexto. 2010. Intervención Psicosocial. 19(2):167-179)
95 Լիլա Մ.և այլք, «Ծեծողների միջամտության ծրագրերում ռեցիդիվի ռիսկի նվազեցման գնահատում. Ծրագրերի արդյունավետության գնահատման առանցքային ցուցիչ», 2014թ., Սոցիալ-հոգեբանական միջամտություն, 23(3):217-223 (Lila M, Oliver A, Catalá-Miñana A, Conchell R. Recidivism risk reduction assessment in batterer intervention programs: A key indicator for program efficacy evaluation. 2014. Psychosocial Intervention. 23(3):217-223)

Հանդիպումների տևողությունն ու հաճախականությունը

Բռնարարների հետ թերապևտիկ աշխատանքների համար հիմնարար է հանդիպումների երկար տևողությունը, մեծ թվաքանակը, դրանց միջև դադարների կարճությունը:[96] Մի շարք հետազոտություններ պարզել են, որ որքան երկար է թերապիայի տևողությունը, այնքան ավելի ցածր է ռեցիդիվի մակարդակը: Այդուհանդերձ, բռնարարների ծրագրերի մի մետավերլուծություն պարզել է, որ նույնիսկ ավելի կարճ միջամտությունները (16 շաբաթից կարճ տևողությամբ) իրականում կարող են ռեցիդիվից խուսափելու ավելի բարձր արդյունքների բերել:[97] Միացյալ Նահանգներում բռնարարների ծրագրերի տևողությունը տատանվում է 3 ամսից 12 ամսվա միջև՝ կախված նահանգի պահանջներից: Ծրագրերի մեծ մասում հանդիպումները անց են կացվում ամեն շաբաթ 1-2 ժամ տևողությամբ և միջինը տևում են 24-26 շաբաթ:[98] Միացյալ Թագավորության քրեահիրավական համակարգի[99] կողմից հավաստագիր ստացած 4 կոգնիտիվ վարքաբանական ծրագրերի տևողությունը տատանվում է 24-68 հանդիպումների միջև՝ կախված բռնարարի ռիսկայնության մակարդակից:[100] Եվրոպայի տարածքում անցկացված 12 ինտենսիվ ծրագրերի մի հետազոտություն պարզել

96 Արիաս Է, Արս Ռ, Վիլարինյո Մ, «Ծեծողների միջամտության ծրագրեր. արդյունավետության մետավերլուծական ակնարկ», 2013թ, Սոցիալ-հոգեբանական միջամտություն, 22(2):153-160 (Arias E, Arce R, Vilariño M. Batterer intervention programmes: A meta-analytic review of effectiveness. 2013. Psychosocial Intervention. 22(2):153-160)

97 Բաբքոք Ջ, Գրին Ս, Ռոբի Ս, «Ծեծողների ծրագրերն արդյո՞ք արդյունավետ են: Ընտանեկան բռնության թերապիայի մետավերլուծական ուսումնասիրություն», 2004թ., Կլինիկական հոգեբանության ակնարկ, 23:1023-1053. (Babcock J, Green C, Robie C. Does batterer's treatment work? A meta-analytic review of domestic violence treatment. 2004. Clinical Psychology Review, 23:1023-1053)

98 Maiuro R, Eberle J. State standards for domestic violence perpetrator treatment: current status, trends, and recommendations. 2008. Violence Vict. 23(2):133-155.

99 The cognitive behavioral programs accredited through the UK criminal justice system are the following: Building Better Relationships, Community Domestic Violence Programme, Healthy Relationships Programme, and the Integrated Domestic Abuse Programme.

100 Bates E, Graham-Kevan N, Bolam L, Thornton A. A review of domestic violence perpetrator programs in the United Kingdom. 2017. Partner Abuse. 8(1):3-46.

է, որ ծրագրերի անձնակազմը 6-10 ամսվա ընթացքում բռնարարների հետ անց է կացրել անհատական հանդիպումներ 24-75 ժամ ընդհանուր տևողությամբ՝ ի հավելումն յուրաքանչյուր շաբաթը կամ երկու շաբաթը մեկ անգամ 2-2,5-ժամանոց խմբային հանդիպումներ, որոնք անց են կացվել 20 շաբաթից մինչև 1,5 տարվա ընթացքում:[101] Միացյալ Նահանգներում շատերը նշում են, որ խմբի իդեալական չափը 6-12 մասնակիցն է:[102] Հաճախ են հանդիպում 8-10 ու նույնիսկ 15-հոգանոց խմբեր:[103]

Համակարգված համայնքային արձագանք

Բռնարարներին միտված միջամտությունները պետք է համարվեն ընտանեկան բռնության խնդրին անդրադառնալու լայն գործողությունների կամ համակարգված համայնքային արձագանքի (ՀՀԱ) մի մաս միայն: ՀՀԱ-ն սոցիալական ծառայությունների, քրեական արդարադատության համակարգի, կանանց կազմակերպությունների, առողջապահական ծառայությունների և այլ կառույցների համակարգային ու կոորդինացված ներգրավումն է ընտանեկան բռնության դեմ պայքարում՝ ճանաչելով այն որպես հասարակական խնդիր, որի լուծմանը միտված միջամտությունները չեն

101 Կուրացի և այլք, «Ընտանեկան բռնարարքներ կատարած անձանց հետ աշխատանքի ծրագրեր. Եվրոպական ու միջազգային մոտեցումները», 2015թ, (Chiurazzi A, Arcidiacono C, Helm S. Treatment Programs for Perpetrators of Domestic Violence: European and International Approaches. 2015. New Male Studies. 4(3):5-22)
102 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քենոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ»,
103 Կուրացի և այլք, «Ընտանեկան բռնարարքներ կատարած անձանց հետ աշխատանքի ծրագրեր. Եվրոպական ու միջազգային մոտեցումները», 2015թ, (Chiurazzi A, Arcidiacono C, Helm S. Treatment Programs for Perpetrators of Domestic Violence: European and International Approaches. 2015. New Male Studies. 4(3):5-22)

կարող իրականացվել մեկուսի:[104] Համագործակցությունն ու դաշինքները ծառայություններ մատուցողների, իրավապահ մարմինների, քրեական արդարադատության մարմինների ներկայացուցիչների միջև առանցքային են ընտանեկան բռնությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու հարցում:[105]

Կրկնահանցագործությունը նվազեցնող համակարգային փոփոխությունների շարքում են՝ բռնարարների ներգրավումը ծրագրերում, ծրագրի առաջին շաբաթներում, երբ կրկնահանցագործության հավանականությունն առավել հավանական է, հանդիպումների ավելի երկար տևողությունը, կանանց ու երեխաներին աջակցող կենտրոնների հետ ավելի ինտենսիվ համագործակցությունը, բռնարարների նկատմամբ դատարանների վերահսկողությունը, որպեսզի նրանք կատարեն ծրագրերի պահանջները, ուղղորդումն այդ ծրագրերին դատաքննությունից առաջ և արագացված կարգով հետաքննությունը:[106]

Անգնահատելի է հաշվետվողականության դերը. իրենց համայնքներում մեկից ավելի մարդու առջև պատասխանատվություն կրող տղամարդիկ (օրինակ՝ պրոբացիայի պատասխանատուների, համայնքի ղեկավարների, մեծ ընտանիքների անդամների, ընկերների, խորհրդատուների) կարծես ավելի հեշտությամբ են կարողանում իրենց վարքը փոփոխել ու վերջ տալ բռնի վարքին:[107]

---

104 Աարոն Ս, Բոլորիեր Ռ, Ծեծողների միջամտության ծրագրերի վրա նոր շեշտադրում անելու անհրաժեշտությունը, 2017թ, «Տրավմա Բռնություն Չարաշահում» 18(4):425-432 (Aaron S, Bealaurier R. The Need for New Emphasis on Batterers Intervention Programs. 2017. Trauma Violence Abuse. 18(4):425-432)

105 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քենսոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ»,

106 Գոնդոլֆ Է, «Ծեծողների խորհրդատվության ծրագրերի գնահատում դժվարին առաջադրանք, որը ցույց է տալիս որոշ արդյունքներ ու ազդեցություն», 2004թ, Ագրեսիա և բռնի վարք, 9:605-631 (Gondolf E. Evaluating batterer counseling programs: A difficult task showing some effects and implications. 2004. Aggression and Violent Behavior. 9:605-631)

107 Ընտանեկան բռնության կանխարգելման հիմնադրամ, Արդարության ազգային ինստիտուտ, Ծեծողների միջամտություն առաջընթացի չափում, 2009թ զեկույց (Family Violence Prevention Fund, National Institute of Justice, Batterer intervention: Doing the work and measuring the progress: A Report on the December 2009 Experts Roundtable, 2009), http://menengage.org/wp-content/uploads/2014/06/Batterer_Intervention_Meeting_Report.pdf.

Այդ իսկ պատճառով բռնարարների ծրագրերը գնահատելիս պետք է նաև գնահատել ընդհանուր համակարգը, որպեսզի հնարավոր լինի բռնարարներին պատասխանատվության կանչել և օժանդակել զոհերին, իսկ վերջիններս պետք է հաշվի առնեն համակարգային ուժերի և սոցիալական ծառայությունների դերը:[108] Այն դեպքերում, երբ պետությունը պարտավորեցնում է, որ բռնարարները ներգրավվեն համապատասխան ծրագրերում, իսկ նրանք դա չեն անում, նրանց հանդեպ կիրառվում են ավելի ծանրացված պատժամիջոցներ, ավելի բարձր մակարդակի վերահսկողություն կամ մեկուսացում: Ընդունված կարծիք կա, որ այս մոտեցումը մեծացնում է ծրագրի շարունակելու հավանականությունը:[109]

Բացի քրեական արդարադատության համակարգից, բռնարարների ծրագրերի անձնակազմը երբեմն պետք է կապ հաստատի համայնքային կազմակերպությունների ու կառույցների հետ, որպեսզի հնարավոր լինի իր այցելուներին հասանելի դարձնել նրանց կարիքները հոգացող ծառայությունները, այդ թվում՝ գործազրկության, լուրջ մտավոր խանգարումների, ալկոհոլի/հոգեներգործուն նյութերի չարաշահման, երեխայի խնամքի հետ կապված հարցերի դեպքում, որոնք բոլորը ցանկացած լուրջ թերապիայի կարևոր կողմն են, որոնք առավելագույնի են հասցնում միջամտության արդյունավետությունը:[110]

108 Էդվարդ Գ., 2012թ. «Ծեծողների ծրագրերի ապագան. վերագնահատելով ապացույցների վրա հիմնված պրակտիկան», Լիբանան, Հյուսիսարևելյան համալսարանի հրատարակություն (Edward Gondolf. 2012. The Future of Batterer Programs: Reassessing evidence-based practice. Lebanon, NH: Northeastern University Press)
109 Նույնը
110 Բաբքոք Ջ, Արմենտի Ն, Քեննոն Ս, և այլք, «Ընտանեկան բռնություն իրականացնողների ծրագրեր, ԱՄՆ-ում ապացույցների վրա հիմնված չափորոշիչներ ընդունելու առաջարկ», 2016թ., Բռնություն զուգընկերոջ կողմից, 7(4):355-460 (Babcock J, Armenti N, Cannon C, Lauve-Moon K, Buttell F, Ferreira R, Cantos A, Hamel J, Kelly D, Jordan C, et al. Domestic Violence Perpetrator Programs: A Proposal for Evidence-Based Standards in the United States. 2016. Partner Abuse. 7(4):355-460)

Հայաստանում բռնարարների արդյունավետ ծրագրի մշակման առաջարկներ

Ստորև մանրամասնվում են, թե ինչ խնդիրներ ու սկզբունքներ է պետք հաշվի առնել Հայաստանում բռնարարների փորձնական ծրագիր սկսելիս: Այս բաժնում ներկայացվող առաջարկները նպատակ ունեն շահագրգիռ տարբեր կողմերին ներկայացնել բռնարարների հետ պատասխանատու և հաշվետու աշխատանքի չափորոշիչների շրջանակ: Առաջարկներն ուղղված են նման ծրագրեր սկսելու կոչ անողներին, նման գործունեությամբ հետաքրքրված ծառայություն մատուցողներին, ինչպես նաև բոլոր այն կառույցներին, որոնք ներգրավված են համայնքային արձագանքման գործընթացում, ներառյալ՝ մասնագիտական ծառայություններ մատուցողներին, պետական կառույցներին, բազմակողմ կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերին, սակայն չսահմանափակվելով նրանցով:

Դասեր լավագույն փորձից

Հաշվի առնելով հայաստանյան համատեքստի հետազոտման և փորձի պակասը, դժվար է կանխատեսել, թե առաջարկներից յուրաքանչյուրը որքանով արդյունավետ կլինի: Այդուհանդերձ, համաշխարհային լավագույն փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծրագրերը դինամիկ կերպով հարմարեցվում են և հիմնվում իրենց համատեքստերին բնորոշ պրակտիկ փորձառությունների ու գիտելիքների վրա: Պարզ է նաև, որ բռնարարների միջամտության ծրագրերի արդյունավետության վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ, որոնցից են՝ ծրագրերի բնութագրիչները, համատեքստը, գնահատման ու հետազոտման նախագծումը և այլն:

Բռնարարների հետ աշխատանքի ծրագիրը չի կարող պարզապես վերցվել մի քաղաքական ու մշակութային համատեքստից ու արդյունավետորեն տեղադրվել մեկ ուրիշում: Բռնարարների ծրագրերի մասին մեր տեղեկությունները մեծապես հիմնված են Հյուսիսային Ամերիկայում ու Արևմտյան Եվրոպայում իրականացված ծրագրերի վրա: Այդքանով հանդերձ, Հայաստանում նման ծրագիր ներդնելու կողմնակիցներն ու ծառայություններ մատուցողները կարող են տասնամյակների պրակտիկ աշխատանքից ու հետազոտական բազայից դասեր քաղել, միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ ցանկացած ծրագիր պետք է մշակվի ու իրականացվի այնպես, որ արևմտյան համատեքստից վերցված մոտեցումը պարզապես չկիրառվի հայաստանյան համատեքստում, և հաշվի առնվեն, թե Հայաստանի

տղամարդկանց կարիքներին լավագույնս բավարարող մոտեցումները որոնք կարող են լինել: Արժե կիրառել Եվրոպայի խորհրդի կողմից բռնարարների ծրագրերի համար սահմանված պայմանների ցանկը, որն ուղենշում է, թե խոշոր հաշվով ինչ պետք է հաշվի առնել բռնարարների ծրագրեր մշակելիս՝ հիմնվելով Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածով ստանձնված պարտավորությունների վրա:[111]

Ծառայությունների մատուցման ուղենշային սկզբունքներն ու նվազագույն չափորոշիչները

Բռնարարների հետ աշխատանքի ծրագիր նախագծելիս կարևոր է մշակել մի փաստաթուղթ, որը կմանրամասնի, թե բռնարարների հետ աշխատանքի տեսական հիմքում ինչ ուղենշային սկզբունքներ են գործելու:[112] Կարելի է սկսել հռչակելով, որ տվյալ կենտրոնը ընտանեկան բռնությունը համարում է մարդու իրավունքների խախտում և առաջնահերթություն է տալիս բռնությունից տուժածների անվտանգությանը: Փաստաթղթում պետք է ներառվեն

111 Եվրոպայի խորհուրդ, «Ընտանեկան և սեռական բռնարքներ կատարած անձանց ծրագրեր. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածը», ցանկի համար տես 31-32 էջերը (Council of Europe, Domestic and Sexual Violence Perpetrator Programmes: Article 16 of the Istanbul Convention: A collection of papers on the Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence, 2014, https://research-information.bristol.ac.uk/files/34955937/Article_16_English.pdf.)

112 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf

նաև բռնարարների ծրագրի նպատակներն ու խնդիրները և իրականացվելիք գործողություններն, օրինակ՝ բռնությունից տուժածների և բռնարարների ռիսկայնության գնահատումը, տուժածների անվտանգության պլանի մշակումը, գնահատման մեթոդները: Կարևոր է ընդունել այն սկզբունքը, որ աշխատանքը հիմնված է լինելու կանանց աջակցման ծառայությունների, երեխաների պաշտպանության ծառայություններ և համայնքային այլ ծառայությունների հետ համագործակցության վրա:
Մեկ այլ կարևոր կետ է ծառայությունների մատուցման նվազագույն չափորոշիչների սահմանումը: Հայաստանում նման ծառայություններ մատուցելու կողմնակիցները կարող են օգտվել միջազգային ուղենիշներից: Այդպիսի օրինակ են Ընտանեկան բռնություն կատարած անձանց հետ աշխատանքի եվրոպական ցանցի (WWP-EN)[113] և Եվրոպայի Խորհրդի[114] ուղեցույցները, որոնք հիմնված են փաստերի վրա՝ հիմնված նվազագույն չափորոշիչների վրա: Միևնույն ժամանակ, Հայաստանում բռնարարների ծրագրեր իրականացնելու կողմնակիցներն ի վերջո կարող են համապետական ուղեցույցներ նախագծել՝ հիմնվելով տեղական առանձնահատկությունների վրա:

Աշխատակազմի վերապատրաստում

Նախքան բռնարարների ծրագրեր սկսելը առանցքային նշանակություն ունի բարձր մոտիվացիա և պատշաճ

113 Ցանցի ուղեցույցների համար, տես՝ European Network for Work with Perpetrators, Guidelines to develop standards for programmes working with perpetrators of domestic violence, 2017, https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Resources_Activities/guidelines/5_2_2____Guidelines_for_Standards_2017.pdf
114 Տես աղյուսակ , 8:18, 57-58 էջ: Council of Europe (2008), Combating violence against women: minimum standards for support services, Council of Europe, Strasbourg. https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/Source/EG-VAW-CONF(2007)Study%20rev.en.pdf

որակավորում ունեցող անձնակազմի վերապատրաստումը: Համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ լավագույն ծրագրերը խոշոր ներդրում են անում աշխատակազմի վերապատրաստման մեջ, որպեսզի ապահովվի բռնարարների հետ աշխատող բոլոր աշխատակիցների մասնագիտական կարողությունն ու բոլորն ունենան գաղափարախոսական նույն հենքը: Վերապատրաստումը ներառում է խմբային աշխատանքներ ու անհատական հանդիպումներ վարելու նախնական որակավորում, ինչպես նաև կարողությունների ընթացիկ հզորացում սեմինարների, համաժողովների, աշխատանքային ժողովների միջոցով:[115] Հայաստանում բռնարարների ծրագրերի կողմնակիցները կարող են նաև դիտարկել համապատասխան որևէ ցանցի միանալը, ինչպիսին Եվրոպական ցանցն է (WWP-EN)[116] և տարածաշրջանում գործող այլ կազմակերպությունների հետ փորձի փոխանակումը:

Աշխատակազմը պետք է ունենա բռնարար հարաբերությունների հիմնական խնդիրներն ու դինամիկան ըմբռնելու գիտելիքներ ու հմտություններ, ունենա մոտիվացիան բարձրացնող հարցազրուցավարման, խումբ վարելու, մասնակիցներին ներգրավելու հմտություններ, պետք է կարողանա ճանաչել ու արձագանքել բռնարար մասնակիցների վարքին, ցածր մոտիվացիային, դիմադրությանը, կարողանա վարել մատյան, տվյալներ հավաքագրել և գնահատել միջամտության առաջընթացը, պետք է աշխատի բռնությունից տուժածների անվտանգությամբ զբաղվող տարբեր շահագրգիռ կողմերի հետ, հանրային պաշտպանությունը պետք է իրականացնի և

115 Կուրացի և այլք, «Ընտանեկան բռնարարքներ կատարած անձանց հետ աշխատանքի ծրագրեր. Եվրոպական ու միջազգային մոտեցումները», 2015թ, (Chiurazzi A, Arcidiacono C, Helm S. Treatment Programs for Perpetrators of Domestic Violence: European and International Approaches. 2015. New Male Studies. 4(3):5-22)
116 Ավելին ցանցի մասին՝ https://www.work-with-perpetrators.eu/ կայքում

լիովին ըմբռնի բռնարարների հետ աշխատանքի էթիկական չափորոշիչները և բռնությունից տուժածների և երեխաների պատշգանության իրավական հիմքերը:[117]
Քանի որ նման աշխատանք Հայաստանում երբևէ չի իրականացվել, անհրաժեշտ է իրականացնել աշխատակազմի վերահսկման, մոնիթորինգի և խորհրդատվության ծավալուն աշխատանքներ, ներառյալ՝ խորհրդատվություն փորձնական ծրագրից առաջ, ընթացքում և դրանից հետո: Ինչպես և կանանց մասնագիտացած ծառայությունների դեպքում, ընդունված մոտեցում է աշխատակազմի պարբերական հանդիպումների անցկացումը՝ դեպքերը քննարկելու, յուրաքանչյուր այցելուի հետ ձեռնարկվող գործողությունները վերլուծելու նպատակով: Ներդրում պետք է նաև արվի բռնարարների հետ աշխատողների ինքնախնամք ապահովելու մեջ, քանի որ նրանք աշխատում են ծայրահեղ դժվար ու էմոցիոնալ առումով սպառող խնդրի շուրջ:

Ուղղորդում, ներգրավում և նախնական գնահատում

Ծրագրի մշակողները պետք է ունենան հաղորդակցության հստակ պլան, որպեսզի կարողանան իրազեկել կենտրոնի գոյության մասին բարեհամբյուր կերպով, այնպես, որ մասնակցությունը խրախուսվի և ցույց տրվի, որ տղամարդիկ

117 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf

ծրագրից շահելու շատ բան կունենան:[118] Սա հատկապես կարևոր է նման ծրագիր սկսելու վաղ շրջանում, քանի որ Հայաստանում տղամարդիկ ծրագրին այդ դեպքում կմասնակցեն սեփական կամքով: Միևնույն ժամանակ օրենսդրության փոփոխությունները, որ ծրագրում ներգրավումը նաև լինի հարկադիր, առաջ ընթացող կարևոր քայլ կլինեն: Հայաստանի պես երկրներում, որտեղ ընտանեկան բռնության մասին իրազեկվածությունը ցածր է, և այն ունի ցածր մակարդակի հասարակական ընդունվածություն, հավանական է, որ սեփական կամքով նման ծրագրին մասնակցող տղամարդկանց թիվը լինի շատ ցածր: Փորձնական շրջանում ակնկալելի է, որ կլինեն քիչ թվով տղամարդիկ բռության ցածր ռիսկայնությամբ, ում համար ծրագրում ներգրավվելու հիմնական շարժառիթը ընտանիքը պահպանելը կլինի: Այսպիսով, կարևոր կլինի երկարաժամկետ կտրվածքում հասնել օրենսդրական փոփոխությունների, որոնցով կսահմանվի բռնարար տղամարդկանց ռեաբիլիտացիայի հարկադրանք՝ իրենց նկատմամբ սահմանված պատժամիջոցների ցանկում:[119] Փորձագետները համաձայնում են, որ կա ինչպես կամավոր, այնպես էլ դատարանի կողմից հարկադրված ծրագրերի կարիք:[120] Բռնարարների ծրագրին պարտադիր մասնակցությունը պետք է ի վերջո դառնա դատաքննությանը հաջորդող պրոբացիայի պայման:

118 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf

119 Նույնը

120 Եվրոպայի խորհուրդ, «Ընտանեկան և սեռական բռնարարքներ կատարած անձանց ծրագրեր. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածը, նյութերի ժողովածու» (Council of Europe, Domestic and Sexual Violence Perpetrator Programmes: Article 16 of the Istanbul Convention: A collection of papers on the Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence, 2014, https://research-information.bristol.ac.uk/files/34955937/Article_16_English.pdf.)

Պետք է նաև սահմանվեն ծրագրին չենթարկվելուց բխող հետևանքները:

Նախքան բռնարարին ծրագրում ներգրավելը, խորհուրդ է տրվում ռիսկայնության գնահատման գործիքի միջոցով չափել նրա ռիսկայնության մակարդակը և կանխատեղել կրկնահանցագործության հավանականությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ռեցիդիվի ամենացածր մակարդակն այն դեպքում է գրանցվում, երբ բռնարարների ծրագրերն իրենց ռեսուրսները կենտրոնացնում են բարձր ռիսկայնությամբ բռնարարների հետ աշխատանքի շուրջ, որոնք ամենահավանականն է, որ օգուտ կստանան ինտենսիվ թերապիայից: Այդուհանդերձ, եթե Հայաստանում ծառայություններ մատուցողները հետաքրքրված են ցածր և միջին ռիսկայնությամբ բռնարարների հետ աշխատել, խորհուրդ է տրվում նման այցելուներին տարանջատել բարձր ռիսկայնությամբ տղամարդկանց խմբերից, որպեսզի նրանց միջև շփումներ տեղի չունենան:[121] Բացի այդ, խորհուրդ է տրվում հաշվի առնել նախորդ բաժնում նշված «Առանցքային ութ գործոնները», գնահատել բռնարարների կարիքները ծրագրում ներգրավելիս, և աշխատանքի ընթացքում հնարավորինս շատ կարիքների փորձել անդրադառնալ:[122]

121 Ռադաց Դ., Ռայթ Է., «Ծեծողների միջամտության ծրագրերում արդյունավետ միջամտության սկզբունքների ներդրումը», 2015թ. Տրավմա Բռնություն և Չարաշահում 17(1):72-87: Արդյունավետ միջամտությունների սկզբունքների համար՝ տես աղյուսակ 1, էջ 74 (Radatz D, Wright E. Integrating the Principles of Effective Intervention into Batterer Intervention Programming: The Case for Moving Toward More Evidence-Based Programming. 2015. Trauma Violence and Abuse. 17(1):72-87)
122 Նույնը:

Թերապիա և հետևողական աշխատանք

Ինչ վերաբերում է բռնարարների հետ աշխատանքի մոտեցմանը, բռնարարների ցանկացած ծրագիր պետք է ունենա ֆեմինիստական սկզբունքների ամուր հենք և արժեքային հստակ կողմնորոշում, որ բռնությունն ու ճնշումն անընդունելի են: Սակայն տվյալները ցույց են տալիս, որ առավել տարածված մոտեցում է հստակ կառուցվածք ունեցող կոգնիտիվ վարքաբանական մոտեցումը, որին հետևում է բռնարարի հետ աշխատանքի հստակ սահմանված պլանը՝ միևնույն ժամանակ կառուցված լինելով լավագույն պրակտիկայի ու փիլիսոփայությունների հենքի վրա: [123]

Հայաստանում բռնարարների հետ ծրագրի բովանդակությունը մշակելիս կարելի է որդեգրել տարբեր ծրագրերի տարբեր ասպեկտները և ներդնել զանազան տեխնիկաներ՝ այդուհանդերձ քիչ թե շատ խստորեն հետևելով կոգնիտիվ վարքաբանական մոդելին: Լավագույն պրակտիկան նաև կոչ է անում ծրագրի բովանդակության մեջ ներառել դերախաղեր, զարգացնել հմտություններ, այդ թվում՝ խնդիրներ լուծելու հմտություններ: Ծրագիր մշակողները պետք է ուշադիր ընտրեն այնպիսի թեմաներ, որոնք հաճախ անդրադառնան, բայց ոչ անպայմանորեն սահմանափակվեն հետևյալ թեմաներով՝ բռնի վարքի ու դրա հետևանքների ճանաչում, ռիսկային իրավիճակների

123 Նույնը:

բացահայտում, զգացմունքների ու վարքի ինքնավերահսկման գործիքներ, կարեկցանքի զարգամցան շուրջ աշխատանք, ծնողավարման հմտությունների կատարելագործում, զոհին մեղադրելու հակվածության նվազեցում, գենդերային դերերի ու կարծրատիպերի ըմբռնում, կոնֆլիկտների լուծում առանց բռնության դիմելու և միջանձնային հմտությունների զարգացում:[124]
Հետազոտական արդյունքները նաև հուշում են, որ խմբային աշխատանքը իրականացվի անհատական մոտեցմամբ, որը ենթադրում է անհատական հանդիպումների անցկացում յուրաքանչյուր բռնարարի հետ: Սա հնարավորություն է տալիս ծրագրերի կառուցվածքում ունենալ ճկունություն, որ ծրագիրը հարմարեցվի տարբեր անհատականություններ ունեցող բռնարարներին, սովորելու նրանց եղանակներին, ռիսկայնությանը, կարիքներին և ստանալ արձագանք: Թեև մոտեցումը պետք է ունենա կառուցվածք, ցանկացած ծրագիր, որը չափազանց կարծր կլինի կամ կունենա ոչ ճկուն բնութագիր և չի արձագանքի իրավիճակից ու անհատից բխող կարիքներին, կլինի անարդյունավետ:

Ինչ վերաբերում է ծրագրի տևողությանը, քանի որ Հայաստանում սահմանված չէ նման ծրագրի մասնակցությունը դատարանի հարկադրմամբ, ծրագրի մշակողները պետք է լավագույն պրակտիկայի հիման վրա սահմանեն իրագործելի ժամանակացույց, որը հստակ ցույց կտա ծրագրին այցելելու տևողությունը (ամիսները), թերապիայի հանդիպումների քանակը: Լավագույն փորձը հուշում է, որ 3-9 ամիս տևող ծրագրերը դրական արդյունքներ

124 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf

են ապահովում:[125] Այս տևողությունը չի ներառում նախնական գնահատումն ու ծրագրի ավարտին հաջորդող ստուգողական հանդիպումները:

Քանի որ հայտնի է, որ Հայաստանում բռնարարների մոտ ալկոհոլի և հոգեներգործող նյութերի չարաշահումը տարածված երևույթ է, ուստի ծրագրի անբաժանելի մաս պետք է լինի նարկոլոգիական խորհրդատվության մատուցումը: Սեփական ծրագրում նարկոլոգիական խորհրդատվությունը ներառելու փոխարեն բռնարարների ծրագրերը կարող են համագործակցել առկա ծառայությունների հետ, եթե դրանք համապատասխանում են միջազգային լավագույն փորձին, կիրառում են փաստերի վրա հիմնված բուժօգնություն, ստուգում, ախտորորշում, գնահատում ու ակտիվորեն բուժում են այդ խանգարումները:

Ինչ վերաբերում է կանանց մասնագիտացած ծառայություններին, բռնարարների շատ ծրագրեր առաջարկում են մի շարք հավելյալ ծառայություններ, ներառյալ՝ թեժ գծեր, ուղղորդում են կայքերի, տպագիր նյութերի, ինքնօգնության գրքերի, որոնց միջոցով տղամարդկանց համար ավելի հեշտ է լինում գենդերային ու բռնությանն առնչվող խնդիրներն ըմբռնելը:[126] Սա Հայաստանում բռնարարների ծրագրի կողմնակիցները կարող են հաշվի առնել որպես երկարաժամկետ նախաձեռնություն:

125 Ռադաց Դ., Ռայթ Է., «Ծեծողների միջամտության ծրագրերում արդյունավետ միջամտության սկզբունքների ներդրումը», 2015թ. Տրավմա Բռնություն և Չարաշահում 17(1):72-87: Արդյունավետ միջամտությունների սկզբունքների համար՝ տես աղյուսակ 1, էջ 74 (Radatz D, Wright E. Integrating the Principles of Effective Intervention into Batterer Intervention Programming: The Case for Moving Toward More Evidence-Based Programming. 2015. Trauma Violence and Abuse. 17(1):72-87)

126 Կուրացի և այլք, «Ընտանեկան բռնարարքներ կատարած անձանց հետ աշխատանքի ծրագրեր. Եվրոպական ու միջազգային մոտեցումները», 2015թ, (Chiurazzi A, Arcidiacono C, Helm S. Treatment Programs for Perpetrators of Domestic Violence: European and International Approaches. 2015. New Male Studies. 4(3):5-22)

Մշտադիտարկում և գնահատում

Անկախ ընտրված եղանակից՝ Հայաստանում բռնարարների ծրագրի կողմնակիցներն ու ծառայություններ մատուցողները պարտադիր պետք է լինեն թափանցիկ և մեծ ներդրումներ կատարեն տվյալների հավաքագրման, մշտադիտարկման ու գնահատման ուղղությամբ, որպեսզի կարողանան չափել ծրագրի արդյունավետությունը և միջազգային արդյունքները Հայաստանի համատեքստի վրա ընդհանրացնելու հնարավորությունը: Կարևոր է նաև բացահայտել ստրատեգիաներ, որոնք կկատարելագործեն միջամտության ծրագրերը՝ ներգրավելով սոցիալ-ժողովրդագրական բազմազան հատկանիշներ ունեցող և աշխարհագրական տարբեր վայրերից եկող բռնարարների:

Ներկայում քիչ բան է հայտնի ընտանեկան բռնություն կիրառող մարդկանց ժողովրդագրական և այլ հատկանիշների մասին, իսկ քրեական արդարադատության համակարգում առկա պաշտոնական տվյալներում ահռելի բացեր կան: Որպես այդպիսին, պետք է լինեն փաստաթղթավորման և տվյալների բազաների կառավարման ընթացակարգեր, որպեսզի հնարավոր լինի հասկանալ, թե ծրագիրն ինչպես է աշխատում: Տվյալները պետք է ներառեն ծրագրին մասնակցող բռնարարների թիվը, ծրագիրն ավարտածների թիվը, ծրագրի հետ համագործակցող կանանց աջակցման ծառայություններից աջակցություն ստացող կին տուժածների թիվը, տուժածների ու բռնարարների մասին ժողովրդագրական տեղեկատվություն, ներառյալ՝ տարիքը, սեռը, բնակության

վայրը, կիրառված բռնության տեսակ(ներ)ը, բռնարարի կապը տուժածի հետ, առաջընթացի գնահատականը:[127]

Բռնարարների հետ աշխատանքի արդյունավետության գնահատումը խիստ ռեսուրսատար է, և բավարար չեն խոսքերն այս գործողության կարևորությունը շեշտելու համար: Գնահատումն այն եզակի գործիքն է, որը ծրագիր մշակողները կարող են գործածել ցույց տալու Հայաստանում ծրագրի իրականացման արդյունավետությունը և խթանելու այն մի համատեքստում, որտեղ այն երբևէ չի կիրառվել: Ինչպես մանրամասն ներկայացվել է նախորդ բաժնում, հաճախ բռնարարների ծրագրերը որպես արդյունավետության չափանիշ ընդունում են ռեցիդիվի ցուցանիշերի անկումն՝ առանց համադրելու այն այլ գործոնների հետ: Սրանից խուսափելու համար գնահատումները պետք է անցկացվեն ըստ նրա, թե որքանով է ծրագիրը հասել իր սահմանած նպատակին, անցկացվել է արդյոք սահմանված բովանդակությամբ, ինչ է սովորել բռնարարը, ինչպես նաև պետք է գնահատվի՝ ըստ ծրագրին լիարժեք մասնակցության կամ դրանից դուրս գալու և վերջապես՝ ծրագիրն ավարտելուց հետո 6-12 ամսվա ընթացքում՝ ըստ բռնության ռեցիդիվի (որը չափվում է ինչպես բռնության զոհերի տված տվյալների, այնպես էլ՝ պաշտոնական տվյալների հիման վրա):[128] Ծրագրերի արդյունավետության բոլոր գնահատումները պետք է պարունակեն կանանց ու երեխաների անվտանգության ու

127 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf

128 Ռադաց Դ., Ռայթ Է., «Ծեծողների միջամտության ծրագրերում արդյունավետ միջամտության սկզբունքների ներդրումը», 2015թ. Տրավմա Բռնություն և Չարաշահում 17(1):72-87: Արդյունավետ միջամտությունների սկզբունքների համար՝ տես աղյուսակ 1, էջ 74 (Radatz D, Wright E. Integrating the Principles of Effective Intervention into Batterer Intervention Programming: The Case for Moving Toward More Evidence-Based Programming. 2015. Trauma Violence and Abuse. 17(1):72-87)

բարեկեցության մասին տեղեկատվություն:

Պետք է ջանքեր ներդնել և ինտեգրել հետազոտական տվյալները լավագույն փորձի հետ, ադապտացնել դրանք տեղական համատեքստին, իսկ դրանից առաջ՝ անցկացնել ինտենսիվ քննարկումներ կանանց խմբերի, քրեական արդարադատության ներկայացուցիչների, հետազոտողների և այլ ներգրավված անձանց հետ: Իդեալական տարբերակում, որոշակի մոտեցման պատահական ընտրանքով անցկացված փորձնական գնահատում պետք է իրականացնել: Այդուհանդերձ, հաշվի առնելով դրա ծախսատարությունը, անցկացման դժվարությունը և ժամանակատարությունը, կարճաժամկետ իմաստով ավելի իրագործելի կլինի ծրագրի մասնակիցներից և բռնությունից տուժածների վկայությունների հավաքագրումը և հետագայում դեպքերի գրանցումը, եթե դրանք տեղի ունենան (վերցնելով ֆիզիկական բռնության կամ ռեցիդիվ ավելի լայն շրջանակ):

Փորձարարական մոտեցումից անդին՝ բռնարարների ծրագրերի գնահատումները կարող են և պետք է բաղկացած լինեն ծրագրի իրականացման և դատական ու պրոբացիոն ընթացակարգերի ուղղակի դիտարկումից, աշխատակազմի և համայնքային առաջնորդների հետ բաց հարցազրույցներից և որակական գնահատման այլ միջոցներից: Ծրագրի ընթացքի ու արդյունքների պարբերական գնահատումը, ինչպես վերը նշվեց, կօգնի ծրագիրը մշակողներին գնահատել ու հարմարեցնել իրենց մոտեցումները, որպեսզի կատարելագործվեն ծրագրի որոշակի բաղադրիչներ և բարձրացվի դրա ընդհանուր արդյունավետությունը:

Բռնությունից տուժածների անվտանգությունը՝ առաջնահերթություն

Կարևոր է փաստել, որ բռնարարների հետ աշխատանքի գերակա նպատակը բռնությունից տուժածների անվտանգությունն ապահովելն է: Բռնարարների ծրագրերի բոլոր մոտեցումները պետք է ներառեն կանանց աջակցման ծառայություններին ու սերտորեն կապված լինեն տուժածների պատշգանության ծրագրերի հետ և բարձրացնեն նրանց անվտանգության մակարդակը: Ծրագրերը մշակողները կարող են բռնությունից տուժածների անվտանգությունն ապահովել՝ նրանց հետ խորհրդակցելով և իրենց (նախկին) կողակցի բռնության ռիսկայնության մակարդակի մասին գնահատականներ ստանալով, ինչպես նաև նրանց տեղեկացնելով բռնարարների ծրագրի նպատակների ու բովանդակության մասին:[129] Նրանց նաև պետք է հստակորեն զգուշացնել, որ ծրագիրը չի երաշխավորում, որ ապագայում բռնությունը կբացառվի, ինչպես նաև որ մասնակից բռնարարները կարող են ծրագրին մասնակցությունը օգտագործել իրենց կողակիցներին մանիպուլացնելու և կրկին վերահսկելու նպատակով:[130] Բռնարարը կարող է ծրագիրն օգտագործել որպես հարաբերությունը փրկելու

129 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց. Ընտանեկան բռնարարների հետ աշխատանքի չափորոշիչներ մշակելու ուղեցույց, 2017, https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Resources_Activities/guidelines/5_2_2____Guidelines_for_Standards_2017.pdf
130 Նույնը:

հիմք, կարող է նաև ստել, որ պատշաճորեն հաճախում կամ յուրացնում է դասընթացները, կարող է գերագնահատել, որ կա վարքի փոփոխություն, կարող է օգտագործել ծրագրից վերցված բառապաշար ու հասկացություններ՝ դրանք օգտագործելով բռնությունից տուժածի դեմ և քննադատելով կամ վերահսկելով նրա վարքը, կարող է ծրագրին հաճախելն օգտագործել դատարանի որոշումների վրա որոշակիորեն ազդելու նպատակով: Այդ իսկ պատճառով կանայք պետք է ստանան աջակցության ու անվտանգության պլանավորում, և ինչպես կանանց, այնպես էլ երեխաների տեսանկյունները պետք է հաշվի առնվեն բռնարարների հետ անմիջականորեն աշխատելիս: Սա ենթադրում է բռնարարների ծրագրերի և կանանց ու երեխաների ծառայությունների միջև սերտ համագործակցություն, որտեղ վերջիններս կարևոր դեր ունեն համակարգն արդյունավետորեն աշխատացնելու հարցում:[131]

Հայաստանյան համատեքստում խնդրահարույց կարող է լինել գաղտնիության հարցը, որի պատճառով բռնությունից տուժածների անվտանգությունը հաճախ վտանգվում է: Օրինակ, դեպքեր են եղել, երբ իրավապահ մարմինների ներկայացուցիչները բռնարարներին տրամադրել են տուժած (նախկին) կնոջ/զուգընկերոջ և երեխաների գտնվելու վայրի մասին տեղեկատվություն: Բռնարարների հետ աշխատելու ընթացքում կարող են ծագել գաղտնիության հետ կապված նոր խնդիրներ: Քանի որ բռնարարների ծրագիրը փորձնական փուլում ընդունելու է սեփական կամքով այցելող մասնակիցներին, անհրաժեշտ կլինի սահմանել ներքին կանոնակարգ, թե ինչ կարող է տեղի

131 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Անդամ կազմակերպությունների կողմից զոհերի անվտանգության, նախկին զուգընկերներին աջակցության ու համագործակցության լավագույն պրակտիկայի զեկույց», 2017թ., WWP EN 2017 Report on member organisations' good practice in victim safety, (ex)partner support and partnerships, 2017, https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Reports/29032018_Good_Practice_Report_FINAL.pdf

ունենալ գաղտնիության ու անձնական անձեռնմխելիության սկզբունքների խախտման դեպքում: Սա բռնության զոհերի պաշտպանությունից բխող անհրաժեշտություն է:[132] Ծայրահեղ կարևոր է, որ ոլորտում աշխատող բոլոր անձանց համար հստակ լինի բռնությունից տուժածների անվտանգության գերակայությունը, և միջոցներ ձեռնարկվեն սահմանափակելու ցանկացած բան, որը կարող է վտանգել այս սկզբունքը:

Բռնարարների հետ աշխատանքի ֆինանսավորումը

Բռնարարների ծրագրերի մասին քննարկումներում հաճախ բարձրաձայնվում է այն ռիսկի մասին, որ նման ծրագրի իրականացումը խլում է առանց այդ էլ սուղ միջոցներով աշխատող կանանց ծառայություններին հատկացվելիք ֆոնդերի գումարից, որն այդքան անհրաժեշտ է նրանց: Նախքան բռնարարների ծրագրերի նախաձեռնումն անհրաժեշտ է ապահովել ընտանեկան բռնությունից տուժածների ծառայությունների համար բավարար, կայուն և երկարաժամկետ ֆինանսավորում: Բռնարարների հետ աշխատանքը պետք է դադարեցվի, եթե պարզվի, որ այն ֆինանսավորվում է կանանց ու երեխաների ծրագրերի

132 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf

ֆինանսավորման հաշվին:

Բռնարարների ծրագրի մշակման վաղ շրջանում պետք է կազմվի իրատեսական ֆինանսական պլան և տրամադրվի բոլոր շահագրգիռ կողմերին: Որոշ դեպքերում բռնարարների հետ փորձնական աշխատանքի ֆինանսավորումը տրամադրում է պետությունը կամ բազմակողմ կառույցներ: Օրինակ, Վրաստանի բռնության դեմ ցանցը նման փորձնական ծրագիր սկսելու ֆինանսավորումը ստացել է ՅՈՒՆԻՍԵՖ-ից: Հիմնական շահագրգիռ կողմերի հետ վաղ քննարկումները և բռնարարների հետ աշխատանքի ամուր հիմքերը կարող են պետական մարմիններին կամ միջազգային կազմակերպություններին համոզիչ թվալ Հայաստանում այդ եղանակով ֆինանսավորում ապահովելու համար: Այդուհանդերձ, Հայաստանում նման ծրագրերի կողմնակիցները կարող են օգտակար համարել նախնական շրջանում պետության կողմից նման ծրագրի անհրաժեշտության ճանաչումը և փորձնական ծրագրին հավանությունը, իսկ ֆինանսավորումն ակնկալեն ավելի ուշ:[133]

Եթե և երբ ծրագիրը դառնա պարտադիր, ֆինանսավորումը պետք է լինի պետական բյուջեից, որպեսզի ապահովվի ծրագրի շարունակականությունը, և այդ ժամանակ քննարկումները կկենտրոնանան ֆինանսավորման չափի, ժամկետների, տրամադրման հարցերի շուրջ: Նման ծրագիրը պահանջում է աշխատակազմի վերապատրաստման, ծրագրի մշակման, մշտադիտարկման ու գնահատման և այլ հարակից ծախսերի ֆինանսավորում, ինչի պատճառով նման ծրագրերը ծախսատար են լինում, և դժվարանում է դրանց ֆինանսավորումը: Այդուհանդերձ, Հայաստանի

133 Նույնը:

կառավարությունը պարտավոր է պայքարել ընտանեկան բռնության դեմ իբրև ստանձնված պարտավորություն, և բռնության դեմ արձագանքի կողմերից մեկն էլ բռնարարների հետ աշխատանքն է: Ժամանակի ընթացքում՝ ի հավելումն կանանց ապաստանների, Ճգնաժամային կենտրոնների, զոհերի հետ աշխատող մասնագետների վերապատրաստման, հանրային իրազեկման ծրագրերի ֆինանսավորման՝ պետությունը պետք է ապահովի բռնարարների հետ աշխատանքի ծառայություններ նույնպես:

Գործընկերության մոտեցումները

Բռնարարների հետ աշխատանքում ներգրավվող համապատասխան կառույցների ու կազմակերպությունների հետ երկխոսություն սկսելը հաջորդ քայլն է: Կախված նրանից, թե որ մարմինն է ստեղծում բռնարարների հետ աշխատանքի ծրագիր, աշխարհում գործում են համագործակցության տարբեր մոդելներ: Որոշ ծառայություններ նախաձեռնվում են կանանց կազմակերպությունների կողմից, այլ դեպքերում դրանք առանձին ծրագրեր են, որոնք համագործակցում են ուղղորդված դեպքերի հիման վրա:[134]

Հաշվի առնելով, թե որքան սուղ են կանանց մասնագիտացած ծառայությունները և փաստը, որ ընտանեկան բռնության դեպքերով ներկայում Հայաստանում զբաղվում են քիչ կառույցներ ու կազմակերպություններ, ողջամիտ կլիներ, եթե

134 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Անդամ կազմակերպությունների կողմից զոհերի անվտանգության, նախկին զուգընկերներին աջակցության ու համագործակցության լավագույն պրակտիկայի զեկույց», 2017թ., WWP EN 2017 Report on member organisations' good practice in victim safety, (ex)partner support and partnerships, 2017, https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Reports/29032018_Good_Practice_Report_FINAL.pdf

Կանանց աջակցման կենտրոնը ստանձներ բռնարարների ծրագիր մշակելու և իր ներկայիս ծրագրերից այն բխեցնելու առաջնորդությունը: Որպես այլընտրանք՝ Կանանց աջակցման կենտրոնը կարող է ծրագրի կողմնակիցների ու ծրագրի մատուցմամբ հետաքրքրված ծառայությունների համար հանդես գալ իբրև խորհրդատու: Երբ բռնարարների ծրագրերը չեն իրականացվում կանանց մասնագիտացած կազմակերպությունների կողմից միևնույն հաստատությունում, պետք է ապահովվի այդ տարանջատ մարմինների սերտ համագործակցությունը, այդ թվում՝ թույլ տալով, որ կանանց մասնագիտացած ծառայություն մատուցողները դիտարկեն բռնարարների ծրագրերի խմբային հանդիպումները, ստուգեն աշխատակազմի կարողությունները, ծրագրի ու դեպքերի վարման հետ կապված՝ դիտարկումներ տրամադրեն:[135] Եթե ծրագիրը մշակողները որոշեն ստեղծել այնպիսի մոդել, որի համաձայն բռնարարների ծրագիրը կմշակի ոչ թե կանանց մասնագիտացած կազմակերպությունն, այլ որևէ այլ կազմակերպություն, ապա շատ կարևոր կլինի համադրել ու ներգծել ծրագրում աշխատանքի, դեպքի վարման, տվյալների հավաքագրման միանման չափորոշիչներ, որպեսզի տուժածների ու բռնարարների հետ աշխատանքներում ներգրավված բոլոր կազմակերպությունները կարողանան արդյունավետորեն համագործակցել: Բռնարարների ծրագրեր վարող փորձագետների, կանանց մասնագիտացած ծառայություններ մատուցող մասնագետների, ընտանեկան բռնությունից տուժած կանանց միջև ընթացիկ քննարկումները կամրապնդեն աշխատանքի հիմքերը և կբարելավեն բռնությունից տուժած կանանց ու երեխաների համար ապահովվող արդյունքները:

135 Ոչ բռնությանը. ընտանեկան բռնարարքներ կատարած անձանց ծրագրեր. կրթում, թերապիա, աջակցում, հաշվետվողականություն կամ պայքար, 2014թ. (No To Violence, Domestic violence perpetrator programs: Education, therapy, support, accountability 'or' strug gle?), 2014, https://www.ntv.org.au/wp-content/uploads/2016/12/Elements-of-DV-perpetrator-program-work.pdf

Ավելի լայն սոցիալական տեսանկյունից՝ նման ծրագրերի կողմնակիցները կարող են պնդել քաղաքականության այնպիսի փոփոխություններ անելու համար, որոնց միջոցով կանանց ծառայությունների ու պետական կառույցների միջև համագործակցությունը, բռնարարների ծրագրերի արդյունավետությունը չափող հետազոտությունների անցկացումը, ծառայությունների մատուցման հավաստագրման ու ծրագրային ուղեցույցների համար չափորոշիչները կդառնան պաշտոնական:[136] Այդ նպատակով կարևոր կլինի ստեղծել աշխատանքային մի խումբ, որը կմշակի բռնարարների հետ աշխատանքի չափորոշիչները՝ համաձայն Ստամբուլի կոնվենցիայի: Աշխատանքային խումբը կարող է համագործակցության արձանագրություն նախագծել պետության ու բռնությունից տուժած կանանց մասնագիտացած ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև, որի հիման վրա կապահովվի բռնությունից տուժածների անվտանգությունը և նրանց անհրաժեշտ աջակցության տրամադրումը: Նրանք կարող են նաև մշակել բռնարարների հետ այնպիսի աշխատանքի չափորոշիչներ և ուղեցույցներ, որոնք հատուկ միտված են բռնությունից տուժածների անվտանգությանը: Բռնարարների հետ աշխատանքը, հնարավոր է, արդեն ներառված լինի կանանց հանդեպ ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային ծրագրում: Երկարաժամկետ նպատակ կարող է լինել քրեական արդարադատության համակարգի ներկայացուցիչների, մասնագիտացած ծառայություններ մատուցողների համար հավաստագրման ծրագրի ստեղծումը՝ կցված լինելով որևէ ակադեմիայի կամ

136 Կուրացի և այլք, «Ընտանեկան բռնարարքներ կատարած անձանց հետ աշխատանքի ծրագրեր. Եվրոպական ու միջազգային մոտեցումները», 2015թ, (Chiurazzi A, Arcidiacono C, Helm S. Treatment Programs for Perpetrators of Domestic Violence: European and International Approaches. 2015. New Male Studies. 4(3):5-22)

համալսարանի, որը կհամադրի ու կմատուցի բռնարարների համար տրամադրվող ծառայությունների մասին տեսական ու մեթոդաբանական գիտելիքներ:

Երկարաժամկետ քաղաքականության փոփոխություն

Հայաստանում բռնարարների ծրագիր մշակելու կողմնակիցները պետք է որդեգրեն համակարգային մոտեցում և ի վիճակի լինեն նորարար ձևերով ադապտացվել փոփոխվող քաղաքական միջավայրերին ու քաղաքական բանավեճերին: Բռնարարների ծրագրերը պետք է տեղակայված լինեն Համակարգված համայնքային արձագանքի շրջանակներում, որը միտված է ողջ երկրում բարելավել կանանց ու երեխաների անվտանգությունը: Անվտանգություն ու ոչ բռնություն խթանելու հարցում անգերագնահատելի դեր ունի բազմաոլորտային համագործակցությունը, ուստի կարևոր է նման ցանցերի ստեղծումը, որոնց ընդհանուր նպատակը կլինի բռնության դեմ պայքարը: Իրավապահ մարմինների և քրեական արդարադատության համակարգի հետ սերտ համագործակցությունը համակարգային արձագանքի կարևոր բաղադրիչ է, որով, սակայն համագործակցությունը չպետք է սահմանափակվի: Ընտանեկան բռնությանը վերջ տալու համար պետք է համագործակցության եզրեր լինեն նաև լայն գործառույթներ ունեցող սոցիալական ծառայությունների

միջև, ներառյալ՝ երեխաների պատշտպանության, առողջապահական մարմինների, մասնագիտացած այլ ծառայությունների միջև:[137] Ավելին, բռնարարների ծրագրերի անձնակազմը պետք է համայնքային այլ ծառայությունների հետ կապ ունենա և տեղեկություններ հաղորդի ծրագրի ձևաչափի, մեդոթաբանության, մասնակցության և ընդունման չափանիշների, անվտանգության հարցերի, մշտադիտարկման, զեկուցման և այլ հարցերի մասին՝ այդպիսով ծրագիրը համայնքում դարձնելով ավելի տեսանելի և դաշինքներ ստեղծելով որոշում կայացնողների միջև:[138]

Համակարգված քաղաքականության մասին հանրային ելույթները նույնպես օգտակար կլինեն և ցույց կտան, որ խնդրի լուծման շուրջ կա միավորված հանձնառություն: Այս առումով Հայաստանում նման ծրագիր իրականացնելու կողմնակիցները կարող են մշակել արձանագրություն, որը կպարունակի մանրամասն ցուցումներ ուղղորդող համակարգի՝ ոստիկանության, դատարանների, սոցիալական ծառայությունների, մասնագիտացած ծառայություններ մատուցողների համար և կմանրամասնի, թե ներգրավված յուրաքանչյուր կողմ ինչ դերեր ու պարտականություններ ունի, և ինչ ընթացակարգեր են սահմանված:[139] Երկարաժամկետ կտրվածքով համակարգված ու շարունակական համագործակցության կարևոր բաղադրիչ են համատեղ անցկացվող դասընթացները, տպագրությունները և հանդիպումները, որոնց ժամանակ կքննարկվեն ընտանեկան բռնության դեպքեր:

137 Բռնարարների հետ աշխատանքի եվրոպական ցանց, «Ինչպես սկսել բռնարարների ծրագիր, մեկնարկային գործընթացի խնդիրները և երկընտրանքները», 2015թ., (Work with Perpetrators European Network, How to Start a Perpetrator Programme? Issues and Dilemmas of the "Start Up" Process, 2015), https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Expert%20Essays/WWP-EN%20Expert%20Essay%20-%20How%20to%20Start.pdf

138 Նույնը:

139 Նույնը:

Ի վերջո, վերը նշված առաջարկները բավարար չեն լինի, եթե չիրականացվեն ընտանեկան բռնությունը վերացնելուն ուղղված այլ նախաձեռնությունների հետ միասին: Սա ներառում է Ստամբուլի կոնվենցիայի վավերացումը, ընտանեկան բռնության քրեականացումը և հավասարության, խտրականության դեմ պայքարի օրենսդրության ամրապնդումն ու արդարադատության հասանելիության բարձրացումը: Կրթական համակարգի բոլոր մակարդակները պետք է անդրադառնան ընտանեկան և կանանց հանդեպ բռնության հարցերին: Դպրոցներում պետք է ջատագովվի ընտանիքի այնպիսի մոդել, որը հիմնված է զուգընկերների հավասարության վրա, իսկ երիտասարդությանը պետք է դասավանդել առանց բռնության կոնֆլիկտներ լուծելու հմտություններ: Միևնույն ժամանակ, պետք է շատ ավելի մեծ ներդրումներ անել հանրային իրազեկվածությունը բարձրացնող արշավներում, որոնք ուղղված են գենդերային վնասակար նորմերն ու կարծրատիպերը փոխելուն: Այսպիսով, բռնարարների հետ աշխատանքը, որի նպատակն է նվազեցնել բռնությունն ու բարձրացնել բռնությունից տուժածների անվտանգությունը, խարսխված կլինի գենդերային ստորակարգումները, բռնությունն ու խտրականությունը փոփոխող մշակութային ու քաղաքական ավելի լայն գործընթացի մեջ:

Սույն հրատարակությունը ստեղծվել է Վորլդ Վիժն Հայաստանի «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագրի աջակցությամբ:
Այստեղ արտահայտված տեսակետները (կամ նյութի բովանդակությունը) միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ՎՎՀ տեսակետները: